

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

# ՄՐԱՑՋԱՆ

# ԼԵՇՆԱՇԽԱՐԴՅ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆ-ԱԶԱՎՈՐ ՊԱՒՅՅԻ ՀԱՎՈՒՅՆ  
ՀՈԳԵՎՈՐ ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ



11 9/14 Saragur Regency geographical.

Yashpal

947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԱՐԲԱԶԱՆ  
ԼԵՌԱԾԻԱՐՀԸ.

A 11/85879

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՌԱՋԱՎՈՐ ԱԺԻԱՅԻ  
ՀՆԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ  
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ



ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ . 2000

ԴՏՀ 93/99

ԳՄԴ 63.3

Մ 917

Գիրքը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Գրքի հրատարակության հովանավորն է հեղինակի սփյուռքահայ  
բարեկամ ՍԱՐԳԻՍ ԶԻՆԶԻՆՅԱՆԸ (Բնյաթ-Մոնրեալ)

Մովսիսյան Ա.

Սբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն  
հոգևոր ընկալումներում.- Ե.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000. 56 էջ

Գրքի շապիկին՝ շումերական կնքադրոշնի հատված և Անտիոքոս Ա Երվանդունու  
կտառոցած սրբավայրը Նեմրութ լեռան վրա (Կոմմագենե)

Մ 0503020913  
2000  
703(02)-2000

ԳՄԴ 63.3

ISBN 5-8080-0431-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակություն, 2000

© Մովսիսյան Ա., 2000

**Աշակերտները հարցողեցին Հյուսիմ.**

«Ասս մեզ, ի՞նչպիսի Շ կյանի մեր վերջը»: Հյուսան ասաց.

«Բացե՞ Շ եր դոք սկիզբը. որպեսզի վերջը որոներ:

Քանզի որտեղ սկիզբն է. այնտեղ էլ վերջը կյանի»...

**Ավետարան ըստ Թովմասի (պարականոն)**

Ինչպես ամեն մի անհատի, այնպես էլ ժողովուրդների կյանքում ճգնաժամների հետո զայխ է մի պահ՝ կանգ առնելու, ինքնամփոփելու, անցածը վերիմաստափորելու և ապագայի համար ուղենիշեր փնտրելու ու ճշտելու: Գերիննյիր են դառնում հազարամյակներ առաջ ձևակերպված հարցադրումները, թե «ո՞վ եմ ես, որտեղից եմ զայխ և ո՞ւր պիտի գնամ»:

Անցնող հարյուրամյակում հայ ժողովուրդը հաղթահարեց իր պատմության ամենատևական և ամենածանր ճգնաժամը՝ պետականության կորլստից, դարեր շարունակ մաքանելուց ու ցեղասպանության ենթարկվելուց հետո վերականգնելով անկախ պետականությունը: 1918թ. ստեղծված Հայաստանի Հանրապետությունը շատ կարծ կյանք ունեցավ: Ինքնապաշտպանական պատերազմները, սովոր ու համաճարակների դեմ պայքարը պարզապես ժամանակ շտվեցին նշված հարցադրումներին անդրադառնալու: Խորիրդային Հայաստանում ևս չէին կարող պատասխան գտնել այդ հարցերին. արգելված էին կամ առնվազն չէին խրախուսվում ազգային զարդոնքի տանող բոլոր հնարավոր քայլերը: Սփյուռքում արվեցին քայլեր այդ ուղղությամբ, բայց Սփյուռքի գերխնիքին, ի վերջո, աշխարհով մեկ ցրված հայության ազգապահապանումն էր: Եվ, թերևս, ներկա սերնդին է վիճակված այդ հարցադրումների պատասխանը ստանալու և դրանք ազգային գիտակցության աստիճանի բարձրացնելու ճակատագիրը, մասնավանդ որ լրացուցիչ մտորումների առիթ են տալիս դարի ու հազարամյակի ավարտն ու նոր դարաշրջանում ազգի ապագայի խնդիրները:

Ներկայացվող աշխատանքը մեծ հավակնություններ չունի, այլ համեստ մի փորձ է՝ պատասխաններու իմքնաճանաշման հարցադրումներից երկուսին՝ ովքը՝ էինք մենք ի սկզբանե և որտեղից ենք զայխ: Ինչպե՞ս է մեր երկիրը ներկայանում իին աշխարհի ժողովուրդների (որոնց մի մասը ժամանակի լինացրում հետացավ պատմության բառերաբևմից) լիցա-վի-պական աշխարհներներում, ո՞րն է նրա խորհուրդը, ովքը՝ ունեցե՞լ են եղել մեր նախնիները և ի՞նչ դեր են կատարել իին աշխարհում, ունեցե՞լ են արդյոք որևէ առաքելություն և եթե այս՝ ո՞րն է դա: Մրանք հարցեր են, որոնց պատասխանները դարերի բազմապիսի փորձությունների ընթացքում մեծ մասամբ կորցրեց մեր ժողովուրդը, բայց, ի բարեբախտություն մեզ, դրանց մասին տեղեկություններ են պահպանվել իին աշխարհի բազմաթիվ

գրավոր իիշատակարաններում, որոնց վերծանումն իրականացավ վերջին երկու դարերի ընթացքում:

Այս գրքույկով առաջին անգամ փորձ է արվում ի մի բերելու Հայաստանի մասին վաղնջական պատկերացումների առանձին դրվագները, որոնք պահպանվել են համաշխարհային (հատկապես արևմտյան) քաղաքակրթության զյուավոր բնօրրաններից մեկում՝ Առաջավոր Ասխայում։ Ընդ որում, դրանց վկայակոչման մեջ խստորեն պահպանվել է ոչինչ չափացնելու և չպակասեցնելու սկզբունքը։ Նյութի շարադրման մյուս սկզբունքը եղել է հնագույն պատկերացումների վերականգնումն նախ ըստ օտար տեղեկությունների, ապա (որպեսզի բացառվի ազգային կողմնապահության արտահայտությունը) միայն դրանց մասին հայկական սկզբնադրյուրներին անդրադառնալը։ Միաժամանակ, այս փորձն առաջինը լինելով՝ չի հավակնում վերջնականության և հետագայում կարող է համարվել նոր տեղեկություններով։

## ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄՈՏ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Ալեքսանդր Մակերնացու արշավանքներով քաղաքակրթության պատմության մեջ սկսվեց նոր՝ հելլենիզմի դարաշրջանը։ Հելլենական մշակույթը բափանցեց Հին Արևելքի երկրներ, իսկ Արևմտաթքում ծանրացան արևելյան մշակութային նվաճումներին։ Նման փոխառնչությունների դարաշրջանում աշքի ընկան մի շարք խոչը գործիչներ, որոնցից մեկը Բաբելոնի գերագույն աստված Բելի տաճարի բրմապետ Բերոսոսն էր<sup>1</sup>։

Ծնված լինելով Ք.ա. մոտ 350 թ. և ստացած լինելով Ժամանակի համար դասական կրորություն՝ նա Ք.ա. 4-րդ դարի վերջին մեկնում է Հունաստան և այնտեղ հիմնում աստղագիտության դպրոց։ Ք.ա. 290 թվականին վերադառնարվ Բաբելոն Սելլվան Անտիոքոս I Սոտեր արքայից պատվեր է ստանում գրելու Բաբելոնի պատմությունը՝ հումարեն։ Քանապեսոր, լավագույնս ծանոր լինելով միջազգեստրյան սեպազիր արձանագրություններին, գրեց «Բաբելոնիկա» եռահատոր աշխատությունը։ Սակայն այդ խիստ արժեքավոր գործը չի պահպանվել մինչ օրս։ Երանից մեզ են հասել միայն հատվածներ՝ գետեղված ոչ հերինակների երկերում, որոնք ևս մեծ կարևորություն են ներկայացնում հին աշխարհի պատմության ուսումնասիրության առումով<sup>2</sup>։ Պահպանված հատվածներում ուշագրավ տեղեկություններ կան՝ նաև Հայաստանի մասին, որոնցից առանձնանում է

<sup>1</sup>Բերոսոսի կյանքի, գործունեության և բողած ժառանգության մասին մանրամասն տե՛ս Schnabel, 1923 գրքում։

<sup>2</sup>Բերոսոսի աշխատության առանձին հատվածներ մեզ են հասել ավելի ուշ շրջանի հետինակների (Հովսեսպոս Փլավիոս, Եվսեբոս Կեսարացի և որիշներ) երկերի միջոցով, որոնք ի մի են բերված Փ. Ծնարելի վերը նշված ուսումնասիրության վերջում գնտեղված հավելվածում (էջ 250-275)։ Բերոսոսից օգտված որոշ հետինակների (Ալեքսանդր Բագմակեա, Աբյուտենու և որիշներ) գործերը ևս մեզ չեն հասել։

համաշխարհային ջրիեղեղի մասին բարելոնյան պատմոթյունը:

Ըստ Բերոսոսի հայոդած ավանդության, Աստված արարչությունից իետո վեց անգամ հայտնվում է մարդկանց տարով պատզամներ (այդ թիվը համընկնում է աստվածային համարված սրբազն գրիքերի քանակին): Սակայն մարդկանց մեղսագործությունն սպառեց Աստծո համբերությունը. և Աստված դրաշեց պատմել նրանց ջրիեղեղով: Աստծո այդարադատ աշքը շանտեսեց նաև մի քանի բարեպաշտներին՝ Քսիսութրոս արքայի զիխափորթյամբ: Հենց նրան էլ պատվիրեց զրի առնել աշխարհի պատմոթյունն ու բացցնել հոյով տակ՝ ջրիեղեղով փրկվելու համար, պատրաստել մեծ նավ: Երբ ամեն բան պատրաստ էր, արքան ցանկացավ խմանալ, թե որ պետք է հասնի իր նավը: Երկնքից պատասխան ստացվեց՝ «Աստվածների մոտ»...

Ջրիեղեղով ոչնչացրեց մեղսագործ մարդկությանը: Հասնելով ցամաքի՝ այրան իր կենց, դատեր և նավավարի հետ դրւու եկավ նավից և փրկարար լեռան վրա զին մատուցեց: Գոհացած աստվածներն անմահություն շնորհեցին նրանց և ընդունեցին իրենց մեջ: Նավում մնացածները դրւու եկան և սկսեցին փնտորել արքային ու նրա երեք ուղեկիցներին, սակայն՝ ապարդյուն: Երկնքից եկող ծայնը նրանց տեղեկացրեց չորս ընտրյալների ճակատագրի մասին, պատվիրեց վերադառնալ, գտնել բարցված սուրբ գրիքերն ու բարտզել բոլորին, վերահիմնել Բարեկնը: Աստվածային խոսքից հայտնի դարձավ նաև, որ իրենց փրկության երկիրը Հայաստանն է:

Փրկվածները վերադառնալ Միջագետք և գործեցին բատ տրված պատվիրանների: Բերոսոսն ավելացնում է, որ նավի բնկորները մինչ իր ժամանակները պահպանվել են Հայաստանի լեռներում, որոնցից մարդիկ, սրբեալ ծյութի կտարներ. բայիսաններ են պատրաստել իրենց համար<sup>1</sup>:

Հիշենք քրմապետ Բերոսոսի պատմոթյունը՝ վկայված ինմ Միջագետքի սեպագիր հիշատակարաններով: Երբ բարեպաշտ արքան ցանկացավ խմանալ, թե ո՞ր պիտի հասնի իր նավը փրկվելու համար, երկնքից պատասխան խմից. «Աստվածների մոտ»: Իսկ երբ փրկվածները ցած իշան նավից, երկնային ծայնն ավետեց, որ նրանք Հայաստանում են...

## ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Դժվար է պատկերացնել աշխարհում մի ժողովուրդ, որն ունեցած չլինի տիեզերաստեղծման, աշխարհարարման մասին ավանդագրույցներ: Հնավանդ այդ զրույցներում առավել կարելորդում է հատկապես այն վայրը, որտեղ տեղի է ունենում արարչագործությունը: Հենց այդ տեղն էլ դառնում է

<sup>1</sup> Ջրիեղեղի պատմոթյունն՝ ըստ Բերոսոսի՝ տե՛ս Schnabel, 1923, էջ 264-266; Հովսեպոս Փալմիոս, Ընդդեմ Ապիոնի, էջ 28; Հովսեպոս Փալմիոս, Հրեական հնախություն, էջ 54-55; Ետերի Պամփիլեայ Կեսարացւոյ, 1818, էջ 15-18, 24-25: Տե՛ս նաև «Երբ ջրիեղեղը սրբեց ամեն բան» բաժնում:

աշխարհի կենտրոնը Երկրի պորտը), որով անցնում է Երկրի (ու տիեզերքի) առանցքը, այնտեղից են վեր խոյանում տիեզերական լեռը, համաշխարհային ծառը կամ վերջինիս կերպավորումներ կենաց և խմաստության ծառերը: Աշխարհի կենտրոնում բարձրացող լեռը կամ ծառը դառնում է տիեզերքում ներդաշնակության պահպանման խորհրդանիշը, որի վերացումը կտանի նախասկզբնական քառսին՝ տիեզերակարգի ոչնչացմամբ: Ուստի և պատահական չէ, որ վիպա-առասպելական նտածողության մեջ արարշագույնության կենտրոնը համարվել է առավելագույնս սրբազն մի վայր<sup>1</sup>:

Արարշագործության մասին ամենավաղ գրի առնված գրույցների գգալի մասը մեզ է հասել Առաջավոր Ասիայից: Դրանցից առավել հանրահայտը Աստվածաշնչի Ծննդոց գրքում պահպանվածն է: Աստվածաշնչյան ավանդության համաձայն՝ Աստծո կողմից տիեզերքն ստեղծվեց վեց օրում և ավարտվեց մարդու արարմանք. դրախտի կենտրոնում կենաց ու խմաստության (բարու և չարի իմացության) ծառերի աճեցումով (Ծննդոց, 1, 1-2, 15): Առաջիկա էջերում դեռ առիթներ կունենանք անդրադառնալու աստվածաշնչյան դրախտին, կենաց ու խմաստության ծառերին: Այստեղ բավարարվենք նշելով, որ դրախտի տեղորշմանը ծառայող գլխավոր փաստարկը այնտեղից չորս գետերի (Եփրատ, Տիգրիս, Գեղմն և Փիտն) արտահոսելը, աներկրայորեն ցույց է տալիս, որ Աստվածաշնչում հիշվող դրախտը, հետևաբար նաև նրա կենտրոնում բարձրացող կենաց և խմաստության ծառերը գտնվել են Հայկական լեռնաշխարհում: Այլ կերպ ասած՝ արարշագույնության կենտրոնն, ըստ Աստվածաշնչի, Հայատանի տարածքն էր:

Ժերևս ավելի սպասելի պիտի լիներ, որ Հին Կտուկարանը գրի առած հրեաներն արարշագործության կենտրոնը համարենի իրենց հայրենի Երկիրը, ինչը, սակայն, այդպես չէ: Այս փաստն առավել ուշագրավ և հատկանշական է դառնում, եթե Հայկական լեռնաշխարհը որպես արարշագույնության կենտրոն է հանդիսանում գալիս ին Առաջավոր Ասիայի մի շարք ժողովորդների տիեզերաստեղծման ավանդություններում, որոնք գրի են առնվել Հին Կտուկարանից դարեր առաջ:

Միջագետքի հարավի վահագույն բնակիչները, որոնք մեզ հայտնի են գրավոր հուշարձաններով, շումերներն են՝ ցայսօր չպարզաբանված ծագումով մի ժողովուրդ, որը ստեղծեց յորօրինակ մի քաղաքակրթություն (այդ բնույթը հիմք ունեց սեպագույնությանը) և Ք. ա. II հազարամյակի սկզբներին հեռացավ պատմության բատերաբնիքից:

Ք. ա. III հազարամյակի I կեսին Արարական թերակղուց Միջագետք ներքափանցեցին սենական ծագում ունեցող ցեղեր, որոնք կենտրոնական Միջագետքում ստեղծեցին նախ Աքալի, հետագայում՝ Բաբելոնի թագա-

<sup>1</sup>Աշխարհի բազմաթիվ մողովուրդների մոտ նման պատկերացումների մասին տես՝ Վ.Ռ.Տուպորովի “Гора”, “Лрею жизни”, “Лрею мироносе”, “Лрею познания” (МНМ, թ. 1, 1992, с. 311-315, 396-407), “Пуп земли” (МНМ, թ. 2, 1992, с. 350) հոդվածները:

վիրտուքյունները. իսկ կյուսիսում՝ Աստրեատանքը: Նրանք յուրացրեցին շումերական քաղաքակրթության նվաճումները յուրովի զարգացնելով դրանք: Փոխառությունների մեջ մեծ տեղ է տև գրավում հոգևոր արժեքները, այդ թվում՝ պարզագործության վերաբերյալ որոշ ավանդազրույցներ, որոնք սերտաճեցին սեմականների հետ: Ծումերական քաղաքակրթության նվաճումները սեպագրի հետ տարածվեցին նաև՝ այլ ժողովուրդների շրջանում: Այդ է պատճառը, որ Միջազգեստը հնաբնակ տարրեր ծագում ունեցող ժողովուրդների գրավոր հուշարձաններում հաճախ են հանդիպում նմանություններ և ընդհանրություններ, որոնց մի մասին առիթներ կունենանք անդրադառնալու մեր առաջիկա շարադրանքում:

Տիեզերաստեղծման վերաբերյալ շումերական ամբողջական բնագիր մեզ չի հասել: Այդ մասին առանձին լրպագներ են ներկայացվում զանազան բնագրերում, որոնցից հնարավոր չեն լիովին վերականգնել տիեզերաստեղծման շումերական ավանդությունը:

Արարչագործության մասին պատճող ինն միջագետության ամենաամբողջական բնագիրը բարելունյան «Ենումն էլիշ...» («Երր վերևում...») պուեմն<sup>1</sup> է: Նրանում պատճվում է, որ նախասկզբնական ժամանակաշրջանում «երր վերևում անվանակոչված չեր երկինքը, իսկ ներքեւում ցամաքն էր անանուն», երկու առաջնաստեղծ օվկիանոսները՝ Ավսուն (շումեր. Արգու) և նախամայր Խոյամարլ, «իրենց ջրերը խառնեցին մնկտեղ», և ծնվեցին աստվածների առաջին սերունդները: Նրանց անհանգիստ վարրի, սակայն, սկսեց զայրացնել երկու նախաստեղծ աստվածներին, որոնք որոշում են ոչնչացնել երիտասարդ աստվածներին: Վերջիններին փրկեց նրանցից խմատնագոյնը՝ Հայան<sup>2</sup>, որը սպանեց Ավսուն և նրա վրա բարձրացրեց իր կացարանը՝ կոչելով հենց «Ավսու»<sup>3</sup>: Քառսից ա-

<sup>1</sup>The Creation Epic, ANET, p. 60-72 (tr. E. A. Speiser); MM, p. 228-277 (tr. St. Dally); “Когда всперху...” - “Эпума Элиш” (Поэма о сотворении мира). ЯОТСС, с. 32-51, (пер. В. К. Афанасьевой). Պոեմն անվանակոչված է ըստ մկրնաբառերի:

<sup>2</sup>Հայան (Էա, շումեր. Ենկի՝ «տիրակալ երկրի») բնագրում հանդիպում է նաև «Նույիմնար» մակդիրով, որը նշանակում է «աստեղող, արարիշ»: Հայա-Ենկիի արարչագործության բազմաթիվ դրվագներ են պատճվում միջագետության մի շարք բնագրերում (այդ մասին ստորև):

<sup>3</sup>Արգու (Ավսու) անվան Միջագետության առավելապես հայտնի էին ստորերկրյա օվկիանոսը, որի տիրակալն էր Հայա-Ենկին, և այդ աստծո տաճարները: Խերական (Ավսուվա) և խուժիական ավանդություններում Արգուն հանդիս է զայս նաև որպես երկրային տարածք (խուժիականում բաղար, տես ԼՍՀ, ս. 309), որը, թերևս, ստորերկրյա օվկիանոսի և երկնիքի կապի շրջանն է: Հին միջագետության պատկերագրության մեջ սովորաբար Եփրատի ու Տիգրիս սկզբնավորվում են Արգուի տիրակալ Հայա-Ենկիի ուսերի շրջանից կամ ձեռքին բռնած սկիմից (տես սկզբ. 1-2): Նոյն աստվածը հայտնի է նաև «Ուն նազքի»՝ ասկունքների տիրակալ, տիտղոսով (ինչը, հասկանալիորեն, վերաբերում է Եփրատի և Տիգրիս ակունքներին), Եփրատով հոսող շարք ջուրը համարվել է Արգուի սկիմը առող (A collection of Sumerian and Akkadian Incantations, Graz, 1958, IX, ս. 119-124, հղումն ըստ

զատված իր նոր կացարանում Հայան մերձենալով կնոջ հետ՝ ծնեց Մարդուկին: Կարգ ու կանոնի հաստատվելը քառուում և ամուսնու վրեժի հանգիստ շեն տախիս մէիամարթին, որը որոշ ժամանակ անց մարտի է դրւու զախիս երիտասարդ աստվածների դեմ: Նրանցից և ոչ մեկը չի հանդգնում դուրս զալ մէիամարթի դեմ, և լյատրյունը փրկում է միայն պատաճի Մարդուկի: Վերջինս համաձայնում է մարտնչել ընդիմ մէիամարթի, եթե բոլոր աստվածները ճանաչեն նրա զերագոյն իշխանությունը, ինչին տրվում է համաձայնություն: Վճռական մարտում Մարդուկը հաղթում է մէիամարթին, և սկսվում է տիեզերքի արարումը նրա կողմից: մէիամարթի մարմինը երկատելով՝ նա մի կեսից նախ ստեղծում է երկինքը, ապա զյսի վրա քարձրացնում է նախնական լեռը, որի ներսից՝ մէիամարթի երկու աշերից բխեցնում է Տիգրիսն ու Եփրատը<sup>1</sup>: Մարմնի մյուս կեսից Մարդուկը ստեղծում է երկիր և ամրապնդում երկնքի ու երկրի կապը: Այնուհետև Հայա աստվածն արարում է մարդկային ցեղը, «Արգու» նմանությամբ աստվածները կառու-

Երևանուն, 1987, էջ 262-263): Արգուում էին պահպում տիեզերքը կառավարող աստվածային սուրբ օրենքները («մե», իսկ շումերական էպոսում «աստվածային սուրբ օրենքների երկիր» է կոչվում Արատտան՝ Հայկական լեռնաշխարհի ցայսօր հայտնի առաջին պետական կազմավորումը (տե՛ս էջ 36, ծնր1 և Հավելված Ա): Նշված փաստերը ցոյց են տախիս, որ ստորեկրյա օվկիանոսի և երկրի կապի շրջանը, վերերերյա Արգուն՝ այն շրջանը, որում Հայան սպանեց նախաստեղծ Արգու-օվկիանոսին և նրա վրա կանցնեցրեց «Արգու» կոչվող իր կացարանը, գտնվել է Հայկական լեռնաշխարհի տարածքում: Նման եղրահանգման օգտին է խոսում Ք. ա. III հազարամյակի միջագետրյան մի կենք (նկ. 1), որին Հայա-Ենիկին պատկերված է Եփրատն ու Տիգրիսը խորհրդանշող ջրաշիրերով և մի ոսրը Հայկական լեռնաշխարհի հարավը եզերու Մաշու (Սափուա-Սասին, տե՛ս էջ 13, ծնր. 1) լեռներին հենած (որոնց մեջտեղից ծագում է արևը): Նույն կենքի վրա Հայա-Ենիկի ոտքերի միջնամասում պատկերված կենդանին ցույլ համարելով՝ Ա.Փիլիպոսյանն ու Հ.Քամալյանը այն դիտարկում են որպես «խորհրդանշային աշխարհագրական ծածկագիր» Տավրոսյան լեռների, և վերջիններս Եփրատի ու Տիգրիսի ակունքի շրջանի հետ համարում են Արգուի տարածքը: Հեղինակներն Արգուի հետ են կապում Հայկական լեռնաշխարհի մի շարք տեղանուններ՝ Արգերիկ, Արսածոր, Ապագլանը, Ապիզողը, Ապշոտիծոր, Բաւոր, Բզնունիք, Բզնունյաց լեռներ, Բզնունյաց ծոց (և կողմինը) և այլն (Փիլիպոսյան, Քամալյան, 1997, էջ 67-69): Ա. Փիլիպոսյանի ու Հ. Քամալյանի դիտարկումը՝ կապված ցոյցի և Տավրոսյան լեռների հետ, շահեկան կենքներ խնդրի լուծման համար, սակայն հարկ է նշել, որ պատկերված կենդանին ոչ թե ցույլ է, այլ՝ այծ (Վերջինս կապվում է Հայա-Ենիկի պաշտամունքի հետ, կենդանատեսք պատկերվելիս նա ներկայացվում էր այծի զյսով և ծկան մարմնով, իսկ նրա նավը կոչվում է «Արգու այծ»): Այդուհանդեռձ, Մաշու լեռների առկայությունը, ինչպես նաև շումերական «Ենիկի և Նինմախ» ասրի համաձայն՝ մարդու արարումը Հարալիում Արգուի կապից (տե՛ս «Աստծո պատկերով ու նմանությամբ» քածնում) և մեր վերը շարադրած փաստարկները լիովին բակարար են Արգու-Հայկական լեռնաշխարհ կապը ցոյց տալու համար: «Պունմի մեկնություններում այս մասին մանրամասնությունը է «Տիգրիսը նրա աջ աշբն է, Եփրատը՝ ձախ աշբը» (ՅՕՏՀ, էջ 287):

ցոմ են Բարելոնը «Աստծո դարպասները», որ հավիտյանս պլիտի իշխեր Մարտիկը՝ բարելոնցիների գերազույն աստվածը<sup>1</sup>:

Տիեզերաստեղծնան այս պատմության մեջ, իրեն արարշագործության կենտրոն, համեստ է զայլս նախնական լեռու բարձրացված Թիամարի զիլսի վրա. որը յուրօրինակ կապ է դառնում երկնի և երկրի միջև։ Լեռից սկզբնավորվում են Տիգլիսն ու Եփրատը, այսինքն՝ այստեղ ևս արարշագործության կենտրոնը Հայկական լեռնաշխարհի տարածքն է։

Քառային ուժերի լեմ հաղթանակի, պարտված հակառակորդի վրա լեռ բարձրացնելու և նոր աշխարհակարգ ստեղծելու պյութեն է լնելած նաև շումերական Նինուրրա աստծուն (զերագույն աստված Էնլիլի որբուն) փառարանող վիպասարում<sup>2</sup>։ Հատկանշական է, որ այստեղ ևս նոր աշխարհակարգի հաստատումը տեղի է տնենում Հայկական լեռնաշխարհում Տիգլիսի ակունքի շրջանում։

Հին միջազգետքյան աշխարհինկալումների համաձայն՝ տիեզերակարգը հաստատում են սահման Մաշու (Մասու), լեռները, «որ այգալույսն ու մայրամուտն են ամեն օր պահպանում, վերևում հասնում են երկնային ծովածքին, ներքեւում՝ նրանց կործքը սանդարամետին է հասնում»<sup>3</sup>։ Այս լեռները, որոնց Գիլգամեշը հասնում է, անմահության երկրի ճանապարհին (որը ծգիլում էր Եփրատի ափով), և տեղանքով, և անվաճք նույնանում են Հայկական լեռնաշխարհի հարավից եզերող Քաշխարի (Ներկայումս՝ Տոր-Արլին) լեռներին, որոնք հունական և միջնադարյան հայկական աղբյուրներում հայտնի են Մասիս և Մասին անուններով<sup>4</sup>։

Սեմական ցեղերի արևմտյան մի հատվածը բնակվելով ներկայիս Սիրիայի հյուսիսում Ք.ա. 14-13-րդ դարերում ստեղծեց Ուգարիթ քաղաք-պետությունը, որից մեզ են հասել մեծ բիլու գրավոր հուշարձաններ։ Ուգարիթյան բնագրերի համաձայն, նրանց գերազույն աստված Իլուի (Էլի) բնակավայրը գտնվում էր Մեծ Գետի ակունքներում, որտեղից սկզբնավորվում էին երկու օվկիանոսները<sup>5</sup>։ Ուգարիթյան տեղեկությունների քննությունը իին առաջազդութանական պատկերացումների համատեքստում բոյլ է տալիս Իլուի (Էլի) բնակավայրը տեղադրել Հայաստանի լեռներում, Մեծ Գետը նույնացնել միջազգետքյան անմահության երկրի և Աստվածաշնչի Եղեմի մայր գետի հետ (տե՛ս «Աստծո պատկերով ու նմանությամբ» ակնարկում), իսկ երկու օվկիանոսների (երկնային և երկրային կամ, զուցե, ստորերկյա) սկիզբը մեկնարանել իրեն աշխարհարաբան կենտրոն<sup>6</sup>։

<sup>1</sup>Պոեմի աշուրական տարրերակում Մարդուկին փոխարինում է Աշորի զիլսավոր աստվածը (ՅՕՏՀ, շ.284), որը, հասկանալիորեն, պայմանավորված է վերջինիս գերազույն իշխանությունը շնչտելու միտումով։

<sup>2</sup>van Dijk, 1983; Kramer, 1961, p.79-82; Կրամեր, 1965, շ. 206-208; ETCVL, 1.6.2.

<sup>3</sup>ԱԱՊ, էջ 143; ԱՊԼԲ, շ. 200-201; ANET, պ. 88; MM, պ. 96.

<sup>4</sup>Տե՛ս «Անմահության որոնումներում. Հայոց երկրի ճանապարհ» բաժնում։

<sup>5</sup>Ալիֆման, 1987, շ. 56, 85 (նաև հրդակ գրականությունը):


<sup>6</sup>Lipinski, 1971, պ. 41-57:



Նկ. 1



Նկ. 2



Ոյ արարյագործության կենտրոն հանդիսացող Իլո (Ել-կունլուշի) աստծոն բնակատեղին գտնվել է Հայկական լոռնաշխարհում, ակնհայտ է նուև քանանական մի ասրի ոչ խերական տարրերակից, որի համաձայն նու բնակվում էր Արեմայան Եփրատի (բնագրում՝ Մալա) ակունքի մոտ<sup>1</sup>:

Տիեզերաստեղծան մասին հայկական նախաքրիստոնեական ավանդագրույցներ մեզ չեն հասել: Հայ մատենագրության և ժողովրդական բանահյուսության մեջ պահպանված տեղեկաբարյունները, սակայն, ոչ միայն ցոյց են տալիս նման ավանդության գոյուրյունը նախաքրիստոնեական Հայաստանում, այլև դրա համանանությունը Առաջավոր Աստվածությունը Առաջավոր Աստվածությունը տարածված վելուիշյալ պատկերացաններին: Մասնավորապես, որպես արարյագործության կենտրոն՝ տիեզերական յեռ է հանդիս զայիս նախաքրիստոնեական Հայաստանի զիյունավոր հոգևոր կենտրոն Բարձր Հայր նահանգը, որը գտնվում էին Հայր աստված Արամագդի: Մայր դիցուհի Անահիտի, Նան աստվածուհու, Արեգ-Սիրիի և այլ պաշտամոննային կենտրոնները: Բարձր Հայրն «Աշխարհացոյցու» բնութագրվում է հետևյալ կերպ: «Այս երկրամասը, իրավես, ինչպես ցոյց է տպալիս իր խոյ անոննը, բարձր է ոչ միայն Սեծ Հայրի մնացած մասերից, այլև ողջ աշխարհից, այդ պատճառով է երան աշխարհի զագար են կոչել: Նա զետեր է արձակում աշխարհի չորս կողմերը. (Բարձր Հայրից) սկիզբ են առնում չորս խոյոր զետերք»<sup>2</sup>... Խոյ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» Էջերում սրբականվել է Բարձր Հայրի լեռներից մեկի անոննը ու բնութագիրը «...Սեծ լեռան վրա՝ աստվածների տեղում, որ կոչվում է արռող Նահատառ»<sup>3</sup>: Զորս խոյոր զետերին մենք կանորադառնանք դրախտի մասին խոսելիս, այստեղ արձանագրենք միայն, որ իին հայոց աշխարհին կալումներում Բարձր Հայրը համարվել է «աշխարհի զագար», խոյ նրա Սեծ լեռը՝ «աստվածների տեր»: Ուշագրագ է, որ «Աշխարհացոյցը» «աշխարհի զագար» անոնով է ելիշում Բարձր Հայրի հարեւանությամբ տարածվող Բյորակնի լեռների (որտեղ, ըստ մինչև մեր ժամանակները պահպանված հայկական ավանդագրույցների, գտնվել է երկրային դրախտը) ամենարարձր զագարը՝ Սերմանց (Սրբանց) լեռը<sup>4</sup>: Այն կարող է համապատասխանել հնդարիա-

<sup>1</sup> El. Ashertu and Storm-god (tr. A. Goetze), ANET, p. 519; ԼՍՀ, ս. 167-169; Lepinski, 1971, թ. 56. Խերական միջավայրում նոյն զետի սրբազն համարվելու մասին տես ԼՍՀ, ս. 186-191:

<sup>2</sup> Երեմյան, 1963, էջ 106; Անանիա Շիրակացի, 1979, էջ 291:

<sup>3</sup> Փավստոս Բուզանդացոյ, 1912, էջ 327: Գրաբար բնագրում «.....ի Սեծի լերինն ի տեղի դիցն՝ զոր կոչեն արռող Նահատառ»: Աշխարհաբար բարզմանության մեջ այս հատվածին փակագծում անհավանալիորեն հավելվել է «միհյանների» բառը «...Սեծ լեռան վրա, աստվածների (միհյանների) տեղում, որ կոչվում է Անահիտի արռող» (Փավստոս Բուզանդ, 1968, էջ 259): Ք. Պատկանյանը և նրան հետեւելով Սո. Մայմասյանը գտնում էն, որ «արռող Նահատառ»-ի փոխարևն պետք է կարդա «արռող Անահիտա» (Փավստոս Բուզանդ, 1968, էջ 259, 335, ծնը. 170):

<sup>4</sup> Երեմյան, 1963, էջ 107-108; Անանիա Շիրակացի, 1979, էջ 293:

կան ավանդագլուխցների սերմնաժամայքքող կենսածին լեռանը՝

Տիեզերական լեռ տպիրաքայ հանդէս է զայխ եռամաս կառուցվածքով, որի գագաթին բնակվում են աստվածները, լեռան տակ շար ուժերը, իսկ կենտրոնում (երկրի վրա) մարդիկ<sup>1</sup>: Մեծ Մասիսը հայ մատենագլուխ մեջ հայտնի է իրեւ «արեգակնամեծ լետոն»<sup>2</sup>, «քարծրագոյն լետոն» բնդ ամենայն տիեզերու»<sup>3</sup>, որի բնդերում բնակվում էին շար ուժերը<sup>4</sup>: Դա ցոյց է տալիս, որ հայոց փաղնջական հավատալիքներում Մեծ Մասիսը և ներկայացել է որպես արարշագույթությունից հետո տիեզերակայզր պահպանող սրբազն լեռ:

## ԱՐԵՎԻ ԵՐԿԻՐԸ

Աստվածաշնչում դրախտոր՝ Եղենք, իշխատակվում է «արեների կողման» (Ծննդոց 2, 8): Ծննդոց գրքի մեկ այլ ճասամ պատճենում է, որ Նոյի տապանը փրկվեց Արարատի լեռներում (իմա՝ Հայաստանում), ինտ դեռևս մեկ յեզիդ խոսոյ մարդիկ «արեներից» գնացին և Սենաարի երկիր մի դաշտում որոշեցին կապուցել երկնալիսա «քարերունյան աշտարակր»: Դրա հանար Աստված խառնեց մարդկանց լեզուները և սփուց նրանց աշխարհով մեկ (9, 1-9): Երկու դեպքում էլ Հայաստանը (Եղեն - դրախտ և Արարատի լեռներ) ներկայացվում է իրեւ արևենքի երկիր, մինչդեռ, այն չին Կոտակարանը գրի առած իրենաների երկրից հյուսիս էր գտնվում: Նոյին գրքի մեկ այլ դրվագում երրորդ անգամ կրկնվում է միննոյն պատկերացումը: «Եվ Հակոբի ճամփա երավ և գնաց արևելքի որդիների երկիրը... Եվ Հակոբը ասաց նրանց, «Եղերայըներս, որտեսիլի՞ց եր դուք»: Եվ նրանք ասացին. «Ծննդ Խառնից ենք...» (Ծննդոց 29, 1-5): Հակոբը Պաղեստինի հարավային Բերսարք քաղաքից ճանապարհում է Հայկական լեռնաշխարհի հարավարեւյան սահմանի հարեւանությամբ գտնվոյ կյուսիսիջազետքայքայան խառնան քաղաքը, որը, չնայած Բերսարքից ուղիղ հյուսիս գտնվելուն, կոչվում է «արեների որդիների երկիր»: Բերված փաստերը ցոյց են տալիս, որ գոնք Ծննդոց գրքում Հայկական լեռնաշխարհի որոշ հարակից շրջանների հետ համարվել է «արեների երկիր»<sup>5</sup>: Որտեղի՞ց է գալիս նման պատկերացումը:

<sup>1</sup>Մարտիրոսյան, 2000: Հեղինակը հայկած է տիեզերաստեղծման ավանդալույցի հետքեր տեսնել «Սահման ծերեր» եպոսի առաջին ճասամ, որ «Կապոտ ծովը» (որին «ծեր չկա») խորհրդանշում է տիեզերական օվկիսանոսը, «ջոջ քարը» տիեզերական լեռը, նրանից բխող և «քարի շորս բոլորը բռնած» «սպիտակ աղբյուրը»: «անմահական» ջորի ու աշխարհի չորս կողմերը ոռողող դրախտային գետը:

<sup>2</sup>Տոռոս Բ.Н., «Գոր», ՄՀՄ, թ. 1, 1992, է. 311-315.

<sup>3</sup>Մովսիս Խորենացոյ, 1913, էջ 39:

<sup>4</sup>Հերուս պատմիչ, 1842, էջ 14:

<sup>5</sup>Մովսիս Խորենացոյ, 1913, էջ 192; Մեծին Վարդանայ Բարձրեղցոյ, 1861, էջ 51; «Ասմանալիք», 1969, էջ 362-364, 481:

<sup>6</sup>Հայրէ է նշել, որ չին Կոտակարանում միշտ չէ «արեներ» ասվելով հասկացվում

Միջագետքյան «Դիլգամենց» էպոսում լրախտի ու անմահության երկրի սահմանը Մաշու<sup>1</sup> լեռներն են. որ տեղի են ոնենում արևածագն ու մայրամուտը:

Նա լսել էր լեռների մասին, որոնց տնունն է Մաշու,

Հենց որ այդ լեռներին նա մոտեցավ,

Որ այգարոյսն ու մայրամուտն են ամեն օր պահպանում,

Վերևում հասնում են երկնային ծովվածքին,

Ներքառում՝ նրանց կործքը սանդարամետին է հասնում.

Մարդակարիճներն են պահպանում նրանց դարպանները.

Շարքուն է տեսը նրանց, հայացքը կործանող,

Նրանց առկայօղող փայլը լուսեր է տապալում:

Արև ծագելս ու մայր մտնելիս՝ Արևն են նրանք պահպանում...<sup>2</sup>

Այսինքն ուստի ինը միջագետքյան պատկերացումների (որոնց մի մաս տեղ է գտնել Աստվածաշնչում), Հայաստանը արևածագի (արևի երման արևելքի) ու մայրամուտի երկիրն էր, արևի հանգրվանատւելոր: Եվ Միջագետքից ու Պատշատինից հյուսիս տարածվող լիննաշխառից համարվել է «արևելք» ոչ թե բառի աշխարհագրական կողմ ցոյց տվող, այլ «արևի ելքի երկիր» խմաստով: Հետազայտմ նախնական խմաստը մոռացվել է, և բառն ընկալվել է աշխարհագրական խմաստով: Ասվածը կարելի է հիմնափոյել նաև նրանով, որ Հայկական լիննաշխառի՝ արևի հանգրվանատելով լիննելու մասին պատկերացումը պահպանվել է նաև խեթական աղբյուրներում: Վերջիններիս համաձայն, արեգակը ծագում էր «Արևելյան ծովից», որը, դատելով փաստերից, վանա լճի խեթական անվանումն է<sup>3</sup>: Դա լիովին համարուն է Գ. Մրգաննաժուանցի 19-րդ դարում գրի առած հայկական ավանդագրույցներին, որոնց համաձայն արևի ննջարանը գտնվում էր Վանա լճի հատակին, որտեղից ամեն առավոտ ենում և որ ամեն զիշեր վերադառնում էր ցերեկվա լրատուն<sup>4</sup>:

Հայաստանի՝ արեւելքի երկիր (ոչ աշխարհագրական խմաստով) լիննելու մասին շափուանց հետաքրքիր տեղեկություն է պահպանել «Սասնա

Հայկական լեռնաշխառին ու հարակից շրջանները, իսկ Երևմիայի և Եզեկիելի մարգարեւորուններում հայաստանյան պետական կազմավորումները ծշբռորեն համարվում են հյուսիսային: «Լ. Ալիշանը վկայակոչելով անցյալում հայտնված տեսակետները Հայաստանը «Արևելք» կամ «Արևելյան տուն» կոչելով վերաբերյալ և վերլուծելով Հին Կոտակարանի այլ դրվագները՝ եղբականում է, որ Աստվածաշնչում «արևելք» են կոչվում Եփրատից արևելք ընկած բոլոր երկրները (Ալիշան, 1904, էջ 252, ծնք. 8):

<sup>1</sup>Գիտական շրջանակներում եղել են Մաշուն Մեծ Մասիսի և Հայկական լեռնաշխառի հարավը եզերող Մասիս / Մասիս (այժմ՝ Տուր-Արդին) լեռների հետ նոյնացման առաջարկներ, որոնցից առավել ընդունելի է երկրորդը (Lehmann-Haupt, 1927, S. 797-798; Խնկլիքեան, 1947, էջ 119-132; Lipinski, 1971, p. 49-50):

<sup>2</sup>ՀԱՊ, էջ 143; ՊՈՃԵ, ս. 200-201; ANET, թ. 88; MM, թ. 96.

<sup>3</sup>Ինչու, 1980, ս. 136:

<sup>4</sup>Մրգաննաժուանց, 1978, էջ 76:

ծոեր» կամ «Սաստինցի Դավիթ» էպոսը, ինչը մի տեսակ անուշադրության է, մատնվել: Էպոսի «Սանասար և Բաղդասար» ճյուղի առաջին մասում («Կոյփ Շաղրադի խալիքայի դեմ») Ծովինարք որդիներին խորհրդութ է, տայլս Բաղրամից փախչել Հայաստան հետևյալ խոսքերով .

Փախենք, գնացենք Հայոց բազավորի քաղաք:

Գիշեր պայծառ աստղն բռներ նշան.

Ցերեկն է հարցոցեք

Արևելից բազավորի Երկիր<sup>1</sup>:

Հայաստանը մեր Խպոտում կոչվում է՝ «Արևելից բազավորի Երկիր», մի բնորսչում, որը կարող էր ծագել ու պահպանված լինել միայն և միայն հնագույն ժամանակներից<sup>2</sup>:

Ի մի բերելով շումերա-աքադական, խեթական, հինգերայական (ասս-վածաշնչան) և հայկական առյօնների տվյալները՝ տեսնում ենք, որ Հայաստանը հնագույն ժամանակներում պատկերացվել է իրեւ արևի բնակուրյան վայր, հանգստարան, արևի երթի (արևելյի) և մուտքի Երկիր:

Վերջում անենք մի ենթադրություն: Ենշանս տեսանը Հին Կոտակարանի կարելորագույն դրվագներում (Եղեմ, ջրհեղեղ և այլն), Հայաստանը համ-դես է զայխ իրքև «արևելք»: Ելենով դրանից՝ չի<sup>3</sup> կարելի, արդյոք, են-թաղրել, որ Նոր Կոտակարանում ևս կիշատակիող «մողերն արևելյից», որոնք առաջինը եկան ողջունելու Հիսոս Քրիստոսի ծննդորը, Հայաստանի քրմերն էին, և առաջինը ողջունելը միստիկական ինչ-որ խորհրդով չի<sup>4</sup> կապվում, արդյոք, քրիստոնեությունը պետականորեն առաջին անգամ Հայաստանում թնդունվելու հետ...

## ԿԱՇԱՌԻ, ԱՄԱՎԱԾՈՒԵՐԻ

Առաջին բաժնում նշվեց, որ իին միջագետքյան սեպագիր ալբյուրների յուրօինակ հանրագիտարան հանդիսացող Ենթատոսի (Ք.ա. 4-3-րդ դր.) «Քարելինիկա» եռահատոր աշխատության մեջ Հայաստանը ներկայանում է իրեւ աստվածների բնակալայր: Եվ այդ տեղեկությունն իր տեսակի մեջ եղակի չէ:

Միջազետքյան «Գիլգամեշ» էպոսի համաձայն, ջրհեղեղից հետո մեծ աստվածները ժողովի հավաքվեցին փրկության լեռան վրա և փրկված հե-

<sup>1</sup>Սաստինցի Դավիթ, 1939, էջ 27; 1981, էջ 21: Նոր համահավաք բնագրում այս հատվածը թերվում է ոչ Լական տարրերությամբ (Սաստինցի Դավիթ, 1993, էջ 35):

<sup>2</sup>Ուշագրավ է, որ Լարուրնա դպրի նրկում Թաղեռս առաքյալի Եղեսիայից դեսի հյուսիս՝ Հայաստանի խորքերը քարոզելու զնալը ներկայացվում է այսպես՝ «Եվ նա ելավ զնաց դեսի Արևելք՝ բարոզելու Քրիստոսի Ավետարանը» (Լարուրնեա, 1868, էջ 46; հմմտ. Պետրոսյան, 1990, էջ 7): Ընազրի հին ասորական տարրերակի համաձայն՝ Թաղեռսը Եղեսիայից անցել է Ծոփք (Պետրոսյան, 1990, էջ 7), որը Եղեսիայից հյուսիս էր գտնվում: Տվյալ բնագրում Հայաստանի հանդես գալիք իրքը «Արևելք», թերևս, հնագույն շրջանից ելորդ հիշողության արտահայտություն է:

բային անմահարյուն շնորհեցին «աստվածների կաճառում»<sup>1</sup>: Միջագետք-յան ավանդությունը ջրինեղեղից փրկությունն ու նոր մարդկության սկզբնա-փուլում կապում է Հայկական լեռնաշխարիի հետ (տես «Երբ ջրինեղեղը սրբեց ամեն բան» բաժնում), ուստի և այնտեղ պետք է գտնվեր «աստվածների կաճառու»: Այնտեղ մեծ աստվածները ժողովի հավաքվելով՝ վճռել են կարլուագոյն հարցեր, որոնցից էր մարդկությանը փերապինի իրավունքի շնորհումը:

Աստվածների «ժողովի լեռան» մասին հիշողություն է պահպանվել Աստվածաշնչի Եսայու մարգարեարյան Բարելոնի քաջավորին վերաբերող հատվածում. «Իո արտիդ մեջ ասում էիր. «Երկինք պիտի բարձրանամ ու իմ արոռու Աստծու աստղերից վեր պիտի բարձրացնեմ. և պիտի բնակվեմ ժողովի լեռան վրա՝ կյուսիսի կողմերում. ամպերի բարձրության վրա պիտի բարձրանամ, Բարձրային պիտի նմանվեմ...» (14, 13-14): Աստծու գանր կյուսիսում է հիշատակում նաև Հին Կտակարանի պարուսկանոն գրեթելից մեկը Ենոքի լ զիբքը (25, 3-5)<sup>2</sup>: Աստծու բնակավայրի հյուսիսում գտնվելու պատկերագումն այնքան տարածված է եղել ինը երրայսկան իրականության մեջ, որ Սլոն լեռը Սաղմոսաց գրքում համարվել է հյուսիսում գտնվող շնայած այն բարձրանում էր Երուսաղեմում. «Տերը մեծ է, և խիստ օրինայի մեր Աստծո քաղաքում, իր սուրբ լեռան վրա: Ողջ երկի ուրախությունը՝ կյուսիսային կողմերում եղող Սլոն է Մեծ Թագավորի քաղաքը» (47/48, 1-2):

Հին Միջագետքում և ինը երրայեցիների շրջանում աստվածների ժողովավայրի մասին եղած տեսլեկությունները համարյալի են կյուսիսափրիասկան Ուգարիթ քաղաքից (Ք.ա. 14-13-րդ դր.) հայտնաբերված լիցաբանաւական բնույթի հալորդությունների հետ: «Իրանց համաձայն, գերազույն աստված Իրոի բնակավայրում, որը գտնվում էր Հայաստանի լեռներում<sup>3</sup> (բառ քանինական ասքի ուշ խերական տարբերակի՝ Արմ. Եվլիաշի՝ Մայա գետի ակունքի շրջանում<sup>4</sup>) ժողովին և խնջույքի էին հավաքվում ուգարիյան լիցաբանի աստվածները:

Աստվածների ժողովավայրում նրանց խնջույքների մասին է անուղղակիորեն վկայում «Գիլգամեշ» Էպոսը, որի համաձայն Գիլգամեշը Մաշու լեռները հայրահարելուց (իմա՞ Հայկական լեռնաշխարի մոտ տր զործելոց) հետո հանդիպում է Միլուրիին՝ «աստվածների տնտեսություն», որը «տնական գարեջոր է կյուրասիրում նրանց»<sup>5</sup>: Միջագետքյան աստվածները խնջույքով են նշում նաև մարդու արարություն, որը կատարվեց Հայկական լեռնաշխարիում (տես «Աստծո պատկերուվ ու նմանությամբ» բաժնում):

<sup>1</sup>ՀԱՊ. էջ 155; ԱՊԼԲ. ս. 212; ANET. թ. 93; MM. թ. 109.

<sup>2</sup>Lipinski, 1971, թ. 56.

<sup>3</sup>Lipinski, 1971, թ. 41-57.

<sup>4</sup>El, Ashertu and Storm-god (tr. A. Goetze), ANET, թ. 519; ԼՍՀ, ս. 167-169; Lipinski, 1971, թ. 56.

<sup>5</sup>ՀԱՊ. էջ 146; ԱՊԼԲ. ս. 204; ANET. թ. 89; MM. թ. 99.

Աստվածների ժողովատեղ լինելուց բացի, հնագոյն առաջավորամիական հավատայիբներում Հայկական լեռնաշխարիկ համարվել է նաև առանձին աստվածների թնակավայրը կամ կապվել նրանց պաշտամոնքի հետ: Լեռնաշխարիկի հետ են կապվել միջազգետրյան մեծ աստված Հայալենկիր և նրա դպի «Նումոզիի» պաշտամոնքը, որոնց մասին կխոսվի առանձին: Հատ խումխական դիցարանուրյան՝ Հայկական լեռնաշխարիկի հայրավում էին գտնվում միջյանց հաջորդած երկու գերազոյն աստվածների կացարան-պաշտամոնքային կենտրոնները. Կումարքիմնը՝ Ուրկիշում (Մաշու/Մասլան լեռների շրջանում) և Թեղշորինը՝ Կումճնում (Մեծ Հայրի Կորդվաց աշխարիկի տարածքում):<sup>1</sup> Հայոց լեռնաշխարիկի մի շարք ժողովուրդների ավանդագրույցներում համարվել է Արև աստծո թնակատեղին, որոնց անդրադանք նախորդ բաժնում:

Հայկական լեռնաշխարիկի աստվածաբնակ տարածք լինելու մասին պատկերացումը շեր կարող գոյուրյուն ունենալ Առաջավոր Ասիայի բազմաթիվ ժողովուրդների մոտ, առանց նրա տեղաբնիկների շրջանում լայն տարածում ունենալու: Եվ որքան էլ քրիստոնեուրյան մոտքը Հայաստան ուղղեցվեց նախարիխառունեականի ոչնչացմամբ, այդուհանդերձ, վայ միջնադարի հայ մատենագրուրյան էջերում պահպանվեցին նմանաբնույթ ուրիշակի և անողուակի տեղեկուրյուններ: Ինչպես արդյուն նշել ենք, ոստ Փափստոս Բուզանդի՝ Բարձր Հայրի Մեծ լեռը հայտնի է եղել իրեն «աստվածների տեղ»<sup>2</sup>: Իսկ Բարձր Հայրն «Աշխարհացոյցում» բնութագրվում է որպես «աշխարիկ զագար»<sup>3</sup>: Նոյն աղբյուրը «աշխարիկ զագար» պատվատիտուսով է հիշում Բարձր Հայրի հարեանուրյամբ բարձրացող Բյուրակնի Սերմանց (Սրմանց) լեռը<sup>4</sup>, իսկ Բյուրակնի լեռներում, ուստ մինչև մեր ժամանակները պահպանված հայկական ավանդագրույցների, գտնվել է երկրային դրախտը (տե՛ս «Աստծո պատկերով ու նմանությամբ» բաժնում):

Ի մի բեկերվ առաջին բաժիններում ասվածը՝ տեսնում ենք, որ շումեւրա-աքաղական, բարելոնյան, տգարիբյան, քանանական, խումխական, խեթական, իին երբայական (աստվածաշնչյան) և իին հայկական աշխարիկնակալութերում Հայաստանը վաղնջական ժամանակներից ի վեր ներկայացնել է իրեն արարշագործուրյան կենտրոն, աստվածաբնակ երկիր, աստվածների ժողովասեղ, կածու, ուր նրանք հավաքվել են և կարևորացույն խնդիրների լուծելու, և խնջույքների...

<sup>1</sup> Ա. Խ. Վ. Հանուն 125-140; Խաչիկյան Մ. Լ., Կոմարցի, ՄՀՄ, տ. 2, ս. 28; Իվանով Վ. Վ., Տեսուն. ՄՀՄ, տ. 2, ս. 505:

<sup>2</sup> Փափստոսի Բիզանտացու, 1912, էջ 327:

<sup>3</sup> Երեմյան, 1963, էջ 106; Անանիա Շիրակացի, 1979, էջ 291:

<sup>4</sup> Երեմյան, 1963, էջ 107-108; Անանիա Շիրակացի, 1979, էջ 293:

A 85879

## ՈՍԿԵԲԵՐ ԵՐԿԻՐԸ ՀԱՐԱԼԻ

Հին միջազգետքյան գրավոր աղբյուրներում ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Հարավի (տարրերակներ՝ Արախ, Արալու, Խարախ) երկրի մասին: Դրանց համաձայն, այն ներկայաւում է երեք կերպարով.

ա) աստվածների բնակավայր՝ նախքան մարդու արարումը, քաղաքակրթյան բնօրբան,

բ) անդրաշխարի,

գ) իրական մի երկիր, որը հարուստ էր ոսկու հանքերով<sup>1</sup>:

Հարավին վերաբերող բոլոր վկայությունների ընմուրյանից պարզ է դառնում, որ այն եղել է իրական-պատմական մի երկիր՝ վկայված մինչև Ք.ա. 7-րդ դարը, որի հետ կապված հնագոյն պատկերացումները առապելականացրել-վկայականացրել են այն՝ նախ ներկայացնելով իրու աստվածների բնակատեղի, ապա՝ անդրաշխարի: Բարեբախտաբար, մեզ հասած գրավոր աղբյուրների ուսումնասիրությամբ հնարավոր է պարզել այլ նվիրական ու առեղծվածային, բայց և իրական երկրի տեղը:


Խնդրի լուծման համար կարևոր նշանակություն ունի շումերական «Էնկի և Նինխսուրազ» վիպասարի Ք. ա. 20-18-րդ դարերով թվագրվող ընդիշարկությունը, որը կարելի է կոչել «Գովը Թիլմունի առևտորի»<sup>2</sup>:

Վիպասարի մեջ հետարրջող հատվածի համաձայն՝ Հարավինց ոսկի եր առարկում Թիլմուն՝ Տուգրի երկրի միջոցով: Պատմական Թիլմունը գտնվել է Պարսից ծոցի Բահրենյան կղզիներում (տես «Ծովմերական դրախտի առեղծվածք» քաժնում): Տուգրիշի վերաբերյալ ևս ունենք բազմաթիվ տեղեկություններ<sup>3</sup>: Սարգոն Աշուրացին (Ք.ա. 19-րդ դ.) Տուգրիշը հիշատակում է Լուլուրի (Ուրմիյ լճից հարավ) և Սուրիլ-Սուրարսու (հետագայի Արմե-Շուրիխան՝ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտարում և Միջազգետքի հյուսիսում) երկրների միջև: Լուլուրիի հարևանությամբ է հիշվում Տուգրիշը նաև Խերական տերության մայրաքաղաքից գտնված խոտերն մի բնագրում (Էլամ-Լուլուրի-Տուգրիշ հերթականությամբ). Էլամը երկրի է Խանական սարսահարքի հարավ-արևմտարում: Բարելունի նշանավոր արքա Համուրապի (Ք. ա. 18-րդ դ.) արծանազրություններից մեկում այն վկայված է Էլամից, Գուտիումից (Կոտիում: Մեծ Հայրի Կորուգաց աշխարհի տարածքում) և Սուրիլից հետո: Եսկ իին աշուրական Ծամշի-Աղադ I (Ք. ա. 19-18-րդ դդ.) արքան Տուգրիշը հիշատակում է Վերին երկրի հարևանությամբ. Վերջինն գտնվել է Եփրատի ու Տիգրիսի վերին հոսանքի շրջանում՝ Հայկական լեռնաշխարհում (որոշ հետինակների կարծիքով, այն պետք է նույնացնել Բարձր Հայրի հետ): Այս տեղեկութ-

<sup>1</sup>Հարավի երկրին վերաբերող հիշատակությունների մասին տես Komoroczy, 1972, p. 113-123; AD, vol. I, part II, 1968, p. 226-227:

<sup>2</sup>Enki and Ninhursag: a Paradise Myth (tr. S.N.Kramer). ANET, p. 37-41; ETCSL, 1.1.1. Ընդմիջարկության ուսումնասիրությունը տես՝ Կոմորոս, 1976, c. 5-36:

<sup>3</sup>Կոմորոս, 1976, c. 12-13, որմ. 26-36 (և հղված գրականությունը):



յունների ամփոփումից ակնհայտ է, որ Տուգրիշը տարածվել է Հայկական լեռնաշխարհի առնվազն հարավում՝ Լուսաբուժի, Գուտյունի և Սուրբի հարեանությամբ<sup>1</sup> (տես քարտեզ 1): Ուստի և Հարավին պետք է փառարձի Բահրենյան կղզիներից Հայկական լեռնաշխարհի հարավ ձգվող գծի շարունակության որորություն: Իմա՞ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական կամ հյուսիսային շրջաններում: Այս եզրահանգումը հաստատվում է մեկ այլ փաստով ևս: Հին աշխարհում հաճախ յուրօրինակ ապրանքները ստանում էին արտադրությունում: Սուրբարտուից Միջազգետը առարվող դրսերի մի տեսակը կոչվում է «Հարավի»<sup>2</sup>, ինչը, եթե համադրենք մի կողմից Սուրբարտու-Տուգրիշ սահմանակցության, մյուս կողմից Հարավի և Տուգրիշի հավանական հարևանության փաստերին, կստանանք Հարավի և Սուրբարտուի տարածքային համբնկում կամ մոտիկություն, թեպես չի բացառվում, որ այստեղ գործ ունենք Հարավից Սուրբարտուի միջոցով Միջազգետը առարվող դրան տեսակի հետ: Այս դեպքում Հարավին պետք է փնտրել Սուրբարտուից հյուսիս՝ կրկին Հայկական լեռնաշխարհում:

Ամփոփելով այս համարոտ տեղազրական վերլուծությունը՝ արձանագրենք, որ Հարավին գտնվել է Հայկական լեռնաշխարհում, և հենց տեղանունն իսկ շատ հարազատ է հայատանայան միջավայրին: Երկրանվան-(ա)լի վերջավորությունը (նաև հետագա աղյու տարբերակով) յայն տարածում ունի լեռնաշխարհի տեղանուններում (Արամալի, Այալի, Մանաւաղի, Դարանաղի, Մարտաղի և այլն): Թե ավելի ճշգրիտ Հայկական լեռնաշխարհի ո՞ր մասում է գտնվել Հարավին, դժվար է ասել: Մեր նախորդ աշխատանքներից մեկում ենթադրել ենք, որ այն կարող է տեղայնացվել Հայկական Տավրոսի լեռներում (Արք և Օրուլ գյուղերի կամ Պտղոմեոսի հիշատակած Արանն կայանի շրջանում) կամ, գոյցե, Վանա լճից արևելք՝ Արալեզք (Լեզք) գյուղի ու դաշտի տարածքում<sup>3</sup>: Չի բացառվում նաև Հարավի տեղանվան նույնությունը Հարք զավառանվան հետ, որի դեպքում կարելի է կապ տեսնել հայոց անվանադրի նախնի, դյուցազն Հայկի հիմնած առաջին և ի պատիվ հայրերի (իմա՞ աստվածների<sup>4</sup>) անվանակոչած Հարք զավառի<sup>5</sup> ու աստվածների բնակավայր Հարավի երկրի միջև: Նշված բոլոր ենթադրություններն, ինչ խոսք, կարիք ունեն հետագա հանգամանալի հիմնավորման: Եթեկայում որոշակի է միայն Հարավի՝ Հայկական լեռնաշխարհում գտնված լինելը:

Հարավի վերաբերյալ հասուլ տասնմասիրության հեղինակ Գ. Կոմորցին այլ իրական երկրի առասպելականացումը բացատրում է երկու հիմնական պատճառներով՝ Ծումերից ու Աքալից ունեցած մեծ հեռավորության և ուկու հանքերով հարուստ լինելու: Վերջինս, ըստ նրա, նոյնապիսի առասպելականացման է հասցրել Նորիխ երկիրը եզրապացիների

<sup>1</sup>Տուգրիշի տեղադրության վերաբերյալ տես Բորոխյան, 1993, էջ 80-83:

<sup>2</sup>Komoroczy, 1972, p. 118; AD, vol. 6, 1956, p. 89.

<sup>3</sup>Մովսիսյան, 1992, էջ 43-44:

<sup>4</sup>Մովսիսի Խորենացւոյ, 1913, էջ 33:

պատկերացումներում, «ազնիվ ոսկի» տնեցող Եվլիլիան Հին Կտակարանում և այլն<sup>1</sup>: Մեր կողմից ավելացնենք երրորդ գլխավոր պատճառը՝ այն, որ հին միջազգետքյան պատկերացումներում Հայկական լեռնաշխարհը ներկայացել է իրու աստվածաբնակ, սրբազն տարածք, որի վերաբերյալ փաստերի արդեն հանդիպել ենք և դեռ կհանդիպենք:

Իսկ պահպանվել է այդ երկիրի մասին որևէ հիշողություն հայոց մեջ:

Մի կողմ քողներով Հարալի-Հարը նույնության վերաբերյալ մեր ենթադրյությունը՝ տեսնում ենք, որ հայոց դիցարանական պատկերացումներում առկա են նման իշխողության հետքեր: Հայոց հին հավատքի համաձայն՝ մարտադաշտում զոլիված հետաներին հարություն էին տալիս «հարալեզ» («յարալեզ») կամ «արալեզ» կոչվող դիցարանական էակները<sup>2</sup>: Դեռևս որարտագիտության հայր համարվող Ա. Հ. Սեյսը «արալեզ» անվան հիմքը կապում էր հին արևելյան առյուրներից հայտնի անդրաշխարհի՝ Արալիի (Հարալի) հետ՝ վերջավորություն համարելով՝ եղանակը: Նրա հետ համաձայնելով՝ Գ. Պ. Ղափանցյանը ցոյց տվեց այդ մասնիկի առկայությունը հայերենի մի շարք կենդանական անվանումներում (իսկեզ, բգեց, լորեզ և այլն. հարալեզները ևս կենդանակերպ էին): Հետազոտման այս բացատրությունն ընդունեցին ուրիշ զիտնականներ ևս:

Այսպիսով, տեսնում ենք, որ հին առաջավորապիտական պատկերացումներում իրու աստվածաբնակ ու սրբազն երկիր, իսկ հետագայում (կապված, թերևս, աստվածների սերնդափոխության գաղափարընկալման հետ) նաև անդրաշխարհ ներկայացող Հարալին լիրական, պատմական մի տարածք է Հայկական լեռնաշխարհում: Վերջինիս բնակիչների դիցարանության մեջ պահպանվել է նրա մասին իշխողությունը՝ անգամ քրիստոնեության ընդունումից տասնամյակներ հետո. հայտնի է, որ Մուշեղ Մամիկոնյանի դիմ նրա հարազատները դրել էին աշտարակի վրա՝ հավատալով հարալեզների հարություն տալու շնորհիմ<sup>4</sup> ...

### «ԱՍՏԾՈ ՊԱՏԿԵՐՈՎ ՈՒ ՆՄԱՆՈՒԹՅԱՄԲ»...

Աստվածաշնչյան պատմության համաձայն՝ արարչության վեցելարդ օրն Աստված արարեց մարդուն երկրի հողից (կավից)՝ իր պատկերով ու

<sup>1</sup>Komoroczy, 1972, էջ 121-122: Հետաքրքիր է, որ հայոց մեջ ոսկեղեն են համարվել դրախտային Տիգրիսի ու Եփրատի ակունքները: Ըստ Գ. Արվանձտյանցի գրառման՝ Տիգրիսի ակունքներում «ամենայն ինչ ոսկեղեն է: Արևուն ճառագայթը ոսկեփայլ: Թերե քոչնոց ոսկեպույն: Զայլ երգոց հավոց ՚ի ծայն ոսկելար բնարի: Ցողունը խոտոց և բուտոց ոսկի: Շաղկոր ամենայն և ամենուրեք ծաղկասիյուռ, տերևն ոսկի, տեսիմ ոսկի»... (Արվանձտյան, 1978, էջ 392): Իսկ Արմ. Եփրատը սկիզբ է առնում Ոսկեանց լեռից:

<sup>2</sup>Արալեզների մասին հայ մատենագրության հաղորդումները՝ մանրամասն բննությամբ՝ տես Սատիկեան, 1930, էջ 107-170; Ղափանցյան, 1944, էջ 28-34:

<sup>3</sup>Ղափանցյան, 1944, էջ 10-12, 30-31:

<sup>4</sup>Փալստոս Բուզանդ, 1968, էջ 276:

նմանությամբ (Ծննդց. 1, 26-28; 2, 7): «Իրանով ավարտվեց արարչազգությունը: Աստված «արևելքի կողմուն» տնկեց որպահտը՝ Եղեմքը. որը և բնակեցրեց մարդկության առաջնեկներին: Եղեմից բխում էր մեծ գետ. որի բաժանվում էր չորս գետերի՝ Փիտոն. Գեհոն. Տիգրիս. Եփրատ: Առաջին երկու գետանոնների պարզաբանման շորջ ցայսօր վեճերը չեն դադարում, մինչդեռ Տիգրիսի ու Եփրատի ակունքների Հայաստանում գտնվելը բազմաթիվ գլխանկանների հիմք է տվել Եղեմք Հայկական լեռնաշխարհում տեղայնացնելու<sup>1</sup>: Այդ մասին է վկայում նաև Եղեմի տեղադրությունը «արևելքի կողմուն», որի վերաբերյալ արդեն խոսվել է «Արևի երկիրը» բաժնում: Ավելացնենք, որ Անտիվաճաշնշում որպահտը ներկայանում է, որպես «Աստծո սուրբ լեռ» (Եղելինել, 28, 13-14), ինչից կարելի է եղրակացնել Եղեմի լեռնային վայր լինելը:

Եղեմի կարևոր բնութագրիներից մեկը մայր գետն է, որը բաժանվեր ճյուղերի ոռոգում է դրախտն ու շրջակա երկրները: Մայր գետի մասին պատկերացումները վկայված են նաև Հին Կտակարանից ավելի վաղ օրի առնված աղբյուրներում: Ռուգարիթի (հյուս. Սիրիա) Ք. ա. 14-13-րդ դարերով բազրվող բնագրերում զերագոյն Աստված Խորի կացարանը, որն ուզարիքյան հավատալիքների համաձայն՝ եղել է ոչ միայն զերագոյն աստծո բնակատեղին և աստվածների ժողովի վայրը, այլև աշխարհաբարձրան կենտրոնը<sup>2</sup>, Եղարագրվում է մեծ Պետի ակունքներում (ինչը համարուն է աստվածաշնչյան պատկերացումներին):

«Գիգասմեշ» էպոսի արայական տարրերակոմ ջրհեղեղից փրկված հերոսին աստվածներն անմահություն շնորհենով՝ բնակեցնում են «գետերի բերանի մոտ»<sup>3</sup>: Այստեղ «գետերի բերանը» նոյնիմաստ է «գետերի ակունքի» հետ, քանի որ հենագոյն միջազգետքյան պատկերացումների համաձայն, գետերը (այլ բայում՝ Եփրատը, Տիգրիսը, Ներանց ակունքը) բխում էին համաշխարհային ստորերկրյա օվկիանոսից, և այնտեղից երկիր արտահուսելու տեղը գետաբերան էր ստորելքի ու ակունք երկրի համար<sup>4</sup>: Նոյն աղբյուրը ներկայացնում է փրկված հերոսի բնակավայրը՝ անմահության երկիրը, որը Եփրատի վերին հոսանքի շրջանում էր, Մաշու (Մասիու, Մասիոն) լեռներից հյուսիս<sup>5</sup>, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհում: Ուշագրավ է, որ ջրհեղեղի մասին պատռող շոմերական բնագրում փրկված հերոսին աստվածները բնակեցնում են Թիլմուն (Դիլմուն) երկրում, «որտեղից ծագում է արելը»<sup>6</sup>: Արևի կացարանի, ծագման ու մայրամուտի

<sup>1</sup>Եղեմի՝ Հայաստանում գտնված լինելու վերաբերյալ մինչև մեր դարասկիզբը հայտնական տեսակետների բննարկումը տես Խճիճեան, 1835, էջ 244-271; Ալիշան, 1904, էջ 1-16, 249-254:

<sup>2</sup>Lipinski E., 1971, p. 41-57; Ունիմալ, 1987, էջ 56, 85.

<sup>3</sup>ՀԱՊ, էջ 161; ՊՊԼԲ, էջ 217; ANET, էջ 95; MM, էջ 116. ՀԱՊ-ում նշված է «գետաբերանի մոտ», ինչը ճիշտ չէ. պետք է լինի «գետերի բերանի» մոտ:

<sup>4</sup>Հմնտ. Lipinski, 1971, էջ 51.

<sup>5</sup>ՀԱՊ, էջ 143-144; ՊՊԼԲ, էջ 200-202; ANET, էջ 88-89; MM, էջ 97-98.

<sup>6</sup>The Deluge (tr. S.N.Kramer), ANET, էջ 44; Կրամեր, 1965, էջ 180; ETCSL, 1.7.4.

տեղի վերաբերյալ պատկերացումներին արդեն անդրադարձել ենք, խև Թիմունի՝ շումերական դրախտի մասին խոսք կլինի հաջորդ բաժնում։ Այստեղ միայն արձանագրենք, որ ջրիների պատմության շումերական և արադական տարրերակներում փրկվող երրորդ բնակություն է հաստատում դրախտում՝ զետի ակտոնքի կամ զետարերանի մոտ, որն անմահության երկիրն էր (վերջինիս մասին մանրամասն տես «Անմահության որոշումներում»։ Հայոց երկրի ճանապարհը» բաժնում):

Մարդու արարման և աշխարհում նրա կոչման սյուժեներ ենք գտնում միջագիտության մի շարք բնագրերում (օրինաված Հին Կտակարանից դարեւ առաջ), որոնցից առանձնապես նշենի են շումերական «Ենկի և Նինմախ»<sup>1</sup> և արադական «Ատրախասխ»<sup>2</sup> վիպասարերը։ Միջագետության ավանդության համաձայն, մարդու արարումից առաջ աստվածներն իրենք են կատարում երկրային աշխատանքները։ Ըստ շումերական «Ենկի և Նինմախ» վիպասարի՝ դա տեղի էր ունենում Հարալի երկրում։ Դժվարություններով ու ձախուրդներով լի աշխատանքից ազատվելու նպատակով աստվածները ժողով են գոմարում և խնդրում մայր դիցունուն՝ ստեղծել մարդկային ցեղը, որը կաշխատեր ու կազատեր աստվածներին եղաց սից։ Նինմախ աստվածուին համաձայնում է և աստվածներից իմաստնագոյնի՝ Հայա-Ենկիի հետ ձեռնամուխ լինում մարդու արարմանը։ Երկու աստվածները կավից ստեղծում են մարդուն և «կյանքի շունչ» հաղորդում նրան։ Մարդու՝ կավից կերտվելով ու «կյանքի շունչ» ստանալով ստեղծվելու մոտիվը հետագայում արտացոլվել է նախաստեղծ Աղամի պատմության մեջ և տարածում գտել ինը երրայական, քրիստոնեական ու մահմեդական կրոնական պատկերացումներում։ Ուշագրավ է, որ շումերական ավանդագրույցը փորձում է յուրովի մեկնարանել մարդկանց արատավոր տեսակների ծագումը։ Նշված վիպասարի համաձայն՝ մարդու արարումից հետո աստվածները հավաքվում են խնջույքի՝ նշելու նոր ստեղծագործության ծնննելը, որի ժամանակ հարբած արարչագործ աստվածները կրկին փորձում են մարդ ստեղծել։ Հարրածության պատճառով ձախողվելով՝ նրանք ստեղծում են անկատար էակներ՝ չծննդարերող կին, անսեռ մարդ և այլ արատներով մարդկանց տեսակներ։ Այսինքն՝ ի ծնե արատավորությունը ինը միջագետության աշխարհներային մեջ աստվածային սխալի արլուս։ Մարդկանց զույգերով ստեղծելով՝ աստվածները սահմանում են նրանց ճակատագիրը. որ այր ու կին «այսուհետև հավլույան» ասպետն միասին, շարունակվի մարդկային ցեղը, որի կոչումն է ճշակել հողը, զբաղվել անասնապահությամբ և այլ աշխատանքներով, ստացված բարիների զոհաբերությամբ կերակրել աստվածներին, կառուցել նրանց պաշտամունքի տաճարներ և երկրպագել հա-

<sup>1</sup>ETCSL, I.1.2.

<sup>2</sup>Atrahasis (tr. E.A.Speiser, A.K.Grayson), ANET, p. 104-106, 512-514; MM (tr. St. Dalley), p. 1-38; "Когда боги, подобно людям..." (Сказание об Атракасисе), ЯОТСС, с. 51-75 (пер. В.К.Афанасьевой).

վատարմորեն. մարդը մահկանացու է, իսկ նրա գործն՝ անցողիկ (նշված գաղափարները բազմիցս արտահայտված են նաև Հին Կտակարանի գրքերում):

Միջազետքյան արարչավայրի տեղու գտնելը մեծ դժվարություն չի հարուցում, քանի որ մեզ արդեն հայտնի է Հարպիի երկրի տեղը (Հայկական լեռնաշխարհ), որ բնակվում էին աստվածները մարդու արարումից առաջ (տես «Ուսկերեր երկիրը Հարպի» բաժնում): Բացի այդ, հայտնի է նաև աստվածների ժողովի վայրն՝ ըստ միջազետքյան (ինչպես և ուզարիյան ու աստվածաշնչյան) հավատալիքների, որը նոյնական գտնվել է Հայաստանի լեռներում:

Հատկանշական է, որ դրախտի պատկերումը՝ կապված երկու մեծ գետերի (Եփրատի ու Տիգրիսի) լեռնային ակունքի հետ, հանդիպում է ինչպես միջազետքյան, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի և հյուսիսային Կովկասի հնագիտական հուշարձաններում<sup>1</sup>. ինչը ևս հավաստում է նշված տարածքների հնագույն պատկերացումներում դրախտի մեր լեռնաշխարհում ներկայանալը:

Հասկանալիորեն, Հայաստանի՝ արարչագործության կենտրոն, դրախտավայր, մարտկության բնօրրան լինելու նախնառաջ հայ իրականության մեջ: Այդ նախն վկայություններ են պահպանվել ինչպես վաղ միջնադարյան հայ մատենագրության էջերում, այնպես էլ ժողովրդական ավանդագրույցներում: Արդեն անդրադարձել ենք «Աշխարհացոյցում» Բարձր Հայրին տրված բնորոշմանը. «...բարձր է ոչ միայն Սնծ Հայրի մնացած մասերից, այլև ողջ աշխարհից, այդ պատճառով էլ նրան աշխարհի զագար են կոչել: Նև գետեր է արձակում աշխարհի չորս կողմերը. (Բարձր Հայրից) սկիզբ են առնում չորս խոշոր գետեր»<sup>2</sup>: Իսկ Բարձր Հայրի Սեծ լեռը, Փավստոս Բուզանդի վկայությամբ, համարվել է «աստվածների տեղ»<sup>3</sup>: Բացի աստվածաբնակ և աշխարհում բարձրագույնը լինելը, հատկանշական է Բարձր Հայրի աշխարհի չորս կողմերը (չորս) գետեր արձակելը, ինչը նույնամում է դրախտի նախն առաջավորապես ական և, հատկապես, աստվածաշնչյան (Եղեմից բխող չորս գետերը) պատկերացումներին: Բարձր Հայրի հարևանությամբ ծգվող Բյուրակնի (Բինգյուի) լեռնազանգվածը մինչև մեր ժամանակները պահպանված հայկական ավանդագրույցներում համարվել է աստվածաստեղծ դրախտավայր<sup>4</sup>, իսկ Բյուրակնի գլխավոր զագար Սերմանց (Սրմանց) լեռը «Աշխարհացոյցում» (ինչպես Բարձր Հայրը) կրել է «աշխարհի զագար» պատվատիտուսը<sup>5</sup>: Աշտիշատի Վահագնի մնելանի մոտակայքում Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին հիշատակում

<sup>1</sup>Ավետիսյան, Բորոխյան, 1999, էջ 34:

<sup>2</sup>Երեմյան, 1963, էջ 106; Անանիա Շիրակացի, 1979, էջ 291:


<sup>3</sup>Փաւատոսի Բուզանդացոյ, 1912, էջ 272:

<sup>4</sup>Ղանմանալյան, 1969, էջ 21-22 և 422:

<sup>5</sup>Երեմյան, 1963, էջ 107-108; Անանիա Շիրակացի, 1979, էջ 293:



Նկ. 3. Սիրակնոյքամ կնքադրում «մեղսագործության» սյուժեի պատկերմամբ  
(Ք. ա. 3-րդ հզ., պահվում է Լոնդոնի Բրիտանական քանգարանում)



Նկ. 4. Ուրու (Արև)  
աստվածը Սաշու (՝)  
լեռներից ծագելիս  
(Ք. ա. 3-րդ հզ.,  
Կենքաղողօշմի հատված)

են «Հացեաց դրախտ» կոչվող վայրը<sup>1</sup>, որ Գրիգոր Լուսավորիչը կատարել է հայոց գորքի մկրտությունը: Հայտնի է, որ հայ իրականության մեջ քրիստոնեության մուտքը ամենուր ուղեկցվում էր նախորդ կրոնի ոչնչացմամբ և վերջինիս հիմքի վրա համանման քրիստոնեականի կառուցմամբ: «Հացեաց դրախտ» անվանումն իր մեջ կարող էր պահպանած լինել այլ վայրի դրախտի մասը կազմած լինելու մասին հիշողությունը, իսկ հենց այնտեղ հայոց գորքի մկրտությունը՝ խորհրդանշել նոր կյանքի սկիզբը:

Դրախտի՝ Հայաստանում գտնված լինելու մասին է խոսում նաև Եղիշեն «Արարածոց մեկնության» աշխատության էջերում՝ ելմերվ Աստվածաշնչի մեկնության դիրքերից<sup>2</sup>:

Դեռ անցյալ դարում, ի մի քերելով Աստվածաշնչի, մատենագրական տեղեկությունների և ժողովրդական գրույցների տվյալները. Աևոնի Ալիշանը փորձել է տալ դրախտի տեղագրությունը՝ հանգելով հետևյալ պատկերին: Ըստ նրա, դրախտը գտնվել է Բարձր Հայք նահանգի և հարակից տարածքներում հարավում սահման ունենալով Հայկական Տավրոսի լեռները, արևմուտքում Եփրատը, հյուսիսում՝ Տայք նահանգի Պարտիզացփոր գավառը (զավառանվան մեջ Ալիշանը պահպանված է համարում Եղիշենի պարտեզի մասին հիշողությունը), արևելքում՝ անցել Այրարարատ և Տմրտքերան նահագներով<sup>3</sup> (տես քարտեզ Ա-ը): Եթե այսօր էլ մեր ոմեցած տվյալները տեղադրենք քարտեզին, կստանանք նոյն սահմաններն այն տարածքի համար, որը ինն առաջավորասիական պատկերացումների համաձայն, գտնվել է դրախտը, որում Աստծո պատկերով ու նմանությամբ արարվել են մարդկության առաջնեկները...

## ՇՈՒՄԵՐԱԿԱՆ ԴՐԱԽՏԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Նախորդ էջերում արձանագրեցինք, որ Հայկական լեռնաշխարհի Առաջավոր Ասիայի վաղագույն հոգևոր ընկալումներում պատկերացվել է իրեն մի տարածք, որում ի սկզբան բնակվել են աստվածները, որ և արարել են առաջին մարդկանց: Առաջիկա ակնարկներամ մենք դիմ կտեսնենք, որ նոյն պատկերացումներում Հայաստանն ընկալվել է ոչ միայն որպես մարդկության բնօրբան, այլև վերածննդի երկիր (ջրհեղեղից հետո), որը պահպում են անմահության ու իմաստության խորհուրդները: Աշխարհը ընկալումային այս համատեքստում, թվում է, թե շումերական աղբյուրներում իրեն դրախտ հանդիս եկող Թիլմոն (Դիլմոն) երկիրը ևս առանց երկու մըտանքի պետք է տեղադրել Հայկական լեռնաշխարհում: Սակայն այդ երկիրը հիշատակվում է միջազգետքյան մի շարք ոչ դիցաբանական բնույթի

<sup>1</sup>Մովսիսի Խորենացւոյ, 1913, էջ 272; Փավստոս Բուզանդ, 1968, էջ 96, 100:

<sup>2</sup>Խաչիլյան, 1992, էջ 245:

<sup>3</sup>Ալիշան, 1904, էջ 10:

բնագրերում (Ք.ա. 25-6-րդ դր.)<sup>1</sup>, որոնց բննությունը քոյլ չի տալիս Թիլ-մունը Միջագետքից հյուսիս տեղադրել: Ստացվում է տարօրինակ մի իրավիճակ. մի կողմից Թիլմունը դրախտավայր է, անեղծ ու սրբազն երկիր, ուր բնագրում են աստվածները, մյուս կողմից (ոչ դիցարանական բնույթի բնագրերում) այն ծովային առևտորի կենտրոն է, և արքաներն, անգամ նվաճելով, հարկատու են դարձնում այն: Ի՞նչ առեղծված է սա, և ո՞րն է որալուծությունը:

Ոչ դիցարանական բնույթի արձանագրությունների հիման վրա Թիլմունի ամենահավանական և ընդունված տեղորոշումը Պարսից ծոցի Բահրեյնյան կղզիներում է<sup>2</sup>: Թիլմունի վերաբերյալ հաղորդումների հակասությունը լուծելու նպատակով Փ. Քորնուլլ ժամանակին առաջադրեց մի վարկած, ըստ որի շումերական քաղաքակրթության նախակրողները բնակվել են Բահրեյնյան կղզիներում, ուստի դրանք շումերները համարել են դրախտ՝ կապված նախնիների պաշտամունքի հետ<sup>3</sup>: Սակայն միջագետքյան և բահրեյնյան միևնույն (ուրեյյան) մշակույթին պատկանող իրերի նեյտրոնային վերլուծությունը ցույց է տալիս, որ Վերջիններս ավելի ուշ շրջանի և բերված են Միջագետքից<sup>4</sup>: Հետևաբար, այս տարբերակով ևս անհնար է լուծել դիցարանական Թիլմունի տեղորոշման խնդիրը: Նկատենք նաև, որ ոչ դիցարանական բնույթի բնագրերում Թիլմունը սովորաբար հանդես է գալիս Մազան և Մելոխա երկրների հետ, ինչը չի հանդիպում դիցարանական բնագրերում:

1914թ. հայտնաբերված շրիենելի մասին հնագոյն՝ շումերական բնագրի համաձայն, աղետից փրկված հերոս Զիուտադրան («շումերական Նոյյա») աստվածների կամքով բնակեցվում է Թիլմունում, «որտեղից ծագում է արևը»<sup>5</sup>: Այս արտահայտությունը պատճառ է դարձել, որ որոշ ուսումնասիրողներ Թիլմունը տեղադրեն Շումերից արևելք և հասցնեն մինչև Հընդկաստան<sup>6</sup>: Դա իրավացի լինել չի կարող, քանի որ, ինչպես տեսանք «Արևի երկիրը» բաժնում, շումերա-արաբական պատկերացումների համաձայն՝ արևը ծագում էր Մաշու (Մասիտս, Մասլոն) լեռներից և մայրամուտին վերադառնում այնտեղ: «Գիլգամեշ» էպոսում ևս շրիենելից փրկված հերոսը բնակվում է Մաշու լեռներից հյուսիս: Այսինքն՝ ըստ հնագոյն միջագետքյան հավատալիքների՝ Թիլմուն-դրախտը նույն անմահության երկիրն է, ուր հասնելու համար պետք էր հաղթահարել «Ճանապարհ դեպի Արատտա», իսկ վերջինս Հայաստանի տարածքում հիշատակված ա-

<sup>1</sup> Թիլմունին վերաբերող հիշատակությունների մասին տես Cornwall, 1946, p. 3f; Kramer, 1963(b), p. 112, 114, note 10 (և հղված գրականությունը); Բնեթ, 1984, c. 45-47, 170-175 և այլն:

<sup>2</sup> Այդ տեսակետի ձևավորման ողջ պատմության մանրամասները՝ սկսած 1879 թվից, տես Չ. Ռիբբիի վերոնշյալ աշխատության մեջ:

<sup>3</sup> Cornwall, 1946, p. 4:

<sup>4</sup> Lloyd, 1978, p. 62-64:

<sup>5</sup> The Deluge (tr. S.N.Kramer), ANET, p. 44; Kramer, 1965, c. 180; ETCSL, 1.7.4.

<sup>6</sup> Տես օրինակ՝ Kramer, 1963(b), p. 111-115:

ռաջին պետականությունն է: Եթե ասվածին ավելացնենք, որ Արատտան շումերական դյուցազնավեպում հայտնի է «աստվածային սուրբ օրենքների երկիր» մակրիյով, նաև համարելի է Աստվածաշնչի Արարատի հետ<sup>1</sup> (որն, ինչպես և Եղեմը, գտնվում էր «արևելքի կողմում»): հասկանալի կրառնա, որ շումերների ամճակուրյան երկիր-դրախտը նույն Արատտան է կամ երկուն է գտնվել են Հայկական լեռնաշխարհում:

Ստանում ենք երկու թիվուն իին Առաջավոր Ասիայում. դիցարանական թիվունը՝ Հայկական լեռնաշխարհում և պատմական (ոչ դիցարանական) թիվունը՝ Բակրեյնյան կղզիներում (Ք. ա. 25-6-րդ դր.): Երկու նույնանուն երկրների մասին տեղեկուրյանները միահյուսվել են միջազգային բնագրերում, ինչն էլ դարձել է իին արևելյագիտուրյան ամենից առելջվածային խնդիրներից մեկի ծագման պատճառը: Խսկ կապ ունե՞ն նոյնանուն այդ երկրները: Եթե անունների համրնկումը պատահական չէ (ինչը թիւ հավանական է), կարելի է ենթադրել Հայկական լեռնաշխարհից բնակչուրյան մի մասի արտագաղթ Բակրեյնյան կղզիներ, որի արդյունքում տեղի է ունեցել նաև տեղանվան փոխադրում: Մըր կարող էր կատարվել նման արտագաղթ: Վերջին սահմանագիծը կարող է լինել Ք.ա. մոտ 2500 թվականը, բանի որ այդ ժամանակվանից վկայված է Բակրեյնյան կղզիների թիվունը: Հնարավոր արտագաղթի ժամանակագրական առավել նախնական սահմանը կարելի է համարել Ք. ա. 6-5-րդ հազարամյակները, եթե շումերական քաղաքակրթուրյան նախակրողները բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հարավային և Միջազգետքի հյուսիսային շրջաններում (հնագիտուրյան մեջ հայտնի Հասսունյան մշակույթի տարածաշրջանում)<sup>2</sup>: Ի դեպ, շումերների համար Հայկական լեռնաշխարհի սրբազն լինելը կարող էր պայմանագրուրված լինել հենց նշված հանգամանքով կապված նախնիների պաշտամունքի հետ: Ժամանակագրական այսպահ մեծ ընդգրկման պայմաններում հնագիտուրյան տվյալները թույլ են տալիս ավելի որոշակիացնել հնարավոր արտագաղթի ժամանակը: Տարիներ շարունակ Բակրեյնյան կղզիներում պեղումներ իրազործած Զ. Քիրքին գրում է, որ այնուն հայտնաբերված վաղագույն շերտերը բվագրվում են Ք. ա. 28-րդ դարով<sup>3</sup>: Նոյն այդ ժամանակաշրջանում է սկսվել Հայկական լեռնաշխարհից երրևէ կատարված մեծագոյն արտագաղթերից մեկը, ինչի արդյունքում Հայաստանի վաղբրունգեղարյան (հայտնի է նաև Կորաբարսյան, Շենգավիթյան և այլ անուններով) մշակույթի կրողները հյուսիսում հասան Հյուսիսային Կովկաս, հարավում՝ Պաղեստին (Վերջինիս Քիրքեր-Կերակ հնավայրի անունը էլ հնագիտուրյան մեջ կոչվում է տարածված մշակույթը)<sup>4</sup>: Ամենայն հավանականուրյանք, այս իրուրյան հետ է

<sup>1</sup>Մանրամասն տես Հավելված Ա-ում:

<sup>2</sup>В.К.Аֆանасьев, Первоис земледельцы Нижней Месопотамии и Элама, ИДВ, ч. 1, с. 66-75.

<sup>3</sup>Տիեզեր, 1984, ս. 346 (ժամանակագրական աղյուսակը):

<sup>4</sup>Խանգաղյան, 1967, էջ 91-94 (և հղված գրականուրյունը):

կապվում նաև Բահրեյնյան Թիգմոնի կիմնումը: Ավելորդ չենք հաճարում նշել, որ Ք.ա. մոտ 28-րդ դարում Հայկական լեռնաշխարհից Միջագետքի հարավ կատարված արտագաղթը փաստվում է նաև շոմերական գրավոր աղբյուրներով (որպան կանոլարատնանք այլ առիրով):

Կա կարծիք, որ Դիմոնը (Թիգմոնը) պետք է նույնացնել Ուրմիո լճից հյուսիս-արևմուտք գտնվող Դիմանի դաշտավայրի հետ<sup>1</sup>: Նման եղանակումն արվել է իմրենելով անտեսների նմանությունը, և չի բացատրվել Ք.ա. 25-6-րդ դարերի պատմական տեղեկությունների հետ հակառակությունը: Բացի այդ, Դիման տեղանունը չի կիշխում վաղ շրջանի աղբյուրներում և ենթադրվում է, որ այն ծագել է միջնադարում Հայաստան ներխուժած դեմքիների ցեղանոնից<sup>2</sup>: Նշված հանգամանքները հաշվի առնելով թիշ հավանական ենք համարելու Դիմոն-Դիման նույնացումը (հատկապես իհնգ հազար տարում տեղանվան անփոփոխ մնալը)<sup>3</sup>:

## ԱՆԴՐԱՇԽԱՐՀԸ

Սեպագիր դպրությունը ստեղծող շումերների լեզվում կարառն ունի «գեռ, երկիր, լեռնային երկիր, թշնամի երկիր, անդրաշխարի» իմաստները<sup>4</sup>: «Լեռ» և «երկիր» բառերի համարժեքությունը մասնագետներին իմրեն է տվել եղրակացնելու, որ շումերական նախահայրենիքն, ի տարբերություն Միջագետքի հարավի, եղել է լեռնային տարածք, իսկ նոյն տերմինի վերախմաստավորումն իրև «քշնամի երկիր» և «անդրաշխարի», թերևս, հետագա պատմական իրադարձությունների ազդեցության արդյունք է: Հատկանշական է, որ կոր-ը ոչ միայն հասարակ գոյական է, այլև որոշակի մի երկիր անվանում: Վերջինիս մասին տեղեկությունների ուսումնասիրությունը հետաքրքրական է հայագիտության տեսանկյունից, հատկապես, Հայաստանի մասին հնագոյն պատկերացումների ամբողջացման առումով:

Կորին, լսու շումերա-աքաղական աղբյուրների, շափազանց հետավոր մի երկիր է: Այդ երկրի տեղորոշման հարցում մեզ օգնում են շումերական «Նինորթա աստծոն պարաներն ու գործերը»<sup>5</sup> և «Շննաննան ու Էրիխը»<sup>6</sup> վիպաշաբերը: Առաջինի համաձայն, Կոր երկրի հրեշտանք մեծազոր Ա-

<sup>1</sup>Այդ տեսակիտք բանավոր գրույցի ընթացքում մեզ է հայտնի Գեորգ Զանոյանը: ՀՀՀԾԲ, հ. 2, Ե., 1988, էջ 113:

<sup>2</sup>Ենթադրում ենք, որ Հայաստանում Թիգմոն անվան իիշողությունը կարող է պահպանված լինել Կորդուքի Թման (նաև՝ Թմձիս) և Ծոփքի Թմնիս տեղանուններում: Ծոփքի Թմնիսը գտնվել է Եփրատի ափին և մտնում է Ալիշանի ուրվագծած դրախտի սահմանների մեջ, իսկ Կորդուք աշխարհի Թմանը՝ Արարոտ լեռան լանջին, որի հետ են կապվում համաշխարհային ջրհեղեղի մասին մի բանի իին ավանդագրույցներ:

<sup>3</sup>Kramer, 1961, p. 76; B.K. Աֆանասյան, Կոր, ՄՀՄ, տ. 2, 1992, շ. 29.

<sup>4</sup>van Dijk, 1983; Kramer, 1961, p. 79-82; Kramer, 1965, с. 206-208; ETCSL, 1.6.2.

<sup>5</sup>Kramer, 1961, p. 82-83; ETCSL, 1.3.2.

սագ (արադ. Ասակլու) աստծո դեմ մարտնչում է միջազետքյան պատերազմի ու Երկրագործության աստված Նինութքան, բայց պարտվելով՝ «քռչունի պես» փախչում է: Ի վերջո, նրան հաջողվում է հաղթել Ասազին, որի կացարանը (անդրաշխարի Կուրը) Տիգրիսի ակունքների շրջանն էր (Հայկական Տալիսու լեռնաշղթան): Միջազետքյան անդրաշխարիի տեղայնացումը լիովին համապատասխանում է հնագույն հայկական համարժեք հավատալիքներին: Աստվածաշնչի հայերեն բարգմանության մեջ միջազետքյան անդրաշխարիի տիրակալ Ներգալի անունը փոխարինված է Անգեղով (Թագավորաց Դ, 17, 30), ինչը ցոյց է տալիս վերջինիս նույն դերը կատարելը հայոց իին դիցարանում: Խոկ Անգեղի պաշտամունքի կենտրոնը՝ Անգեղ տուն զավառը գտնվում էր հենց Արևմտյան Տիգրիսի ակունքներում (Աղձնիք նահանգում):

«Ինաննան ու Երիխո» վիպաշքում ևս ներկայացվում է միջազետքյան աստծո պայքարն ընդյեն Կուրի, որն այս անգամ հանդիս է զայխ Երիխ լեռան տեսքով<sup>1</sup>: Վերջինս գտնվում է Լուլուրի Երկրում՝ Ուրմիու լճից հարավ<sup>2</sup>, ինչը ցոյց է տալիս, որ, ըստ միջազետքյան հավատալիքների, այդ շրջանը ևս մտնում էր անդրաշխարիի Վերգետնյա սահմանների մեջ: «Ուկերեր Երկիրը Հարավի» բաժնում արդեն ասվել է, որ Հայկական լեռնաշխարհում գտնվող Հարավին ևս իրական պատմական տարածք լինելով՝ նախ համարվել է աստվածների բնակավայր, ասպա՝ անդրաշխարի: Այդ առումով ոչչագրավ է իին միջազետքյան աշխարհներում ներկայությունը՝ և դրական, և բացասական բնորոշումներով: Ընդ որում, դրականը (աստվածների ու անմահության Երկիրը, դրախտը) գտնվում էր հյուսիսում, իսկ բացասականը՝ նրանից հարավ, դրա համար էլ անմահություն որոնող հերոսը Միջազետքից պետք է անցներ Մաշտ լեռները, որն աստվածների ու մարդկանց աշխարհի սահմանագիծն էր, հաղթահարեր մուր աշխարհն ու մահվան ջրերը և նոր միայն հասներ հավախտենական երանության Երկիր: Նոյնպիսի դիրք ունեն նաև դրախտուն ու անդրաշխարի հայկական հավատալիքներուն: Բարձր Հայրը՝ հյուսիսում, Անգեղ տունը՝ հարավում (ավելի մանրանաս տեսն ստորև):

Փոքր-ինչ շեղվելով նյութից՝ ցանկանում ենք մեկ անգամ ևս ընդգծել շումերա-արադական աղբյուրների (այդ թվում՝ անդրաշխարի Կուրին Վերաբերսոյ) ուսումնասիրության կարեռությունը հայագիտության համար և մի քանի նկատառումներ, որոնք կարող են զարգացվել հետազյում: Ասագ (Ասակլու) աստվածը, որի կացարանը (իմա՝ պաշտամունքի գլխավոր կենտրոնը) Հայկական Տալիսուն էր, կարող էր հայաստանյան բազում այլ աստվածների նման իր անունը բոլոնել Հայոց Բուն տոմարում: հայկական օրացույցի ամսվա 17-րդ օրանունն է «Ասակ»<sup>3</sup>: Հայաստանի տարբեր

<sup>1</sup>Kramer, 1961, p. 82-83; ETCSL, 1.3.2.

<sup>2</sup>Լուլուրիի մասին տես Klengel, 1966, S. 349-371:

<sup>3</sup>Անանիա Շիրակացի, 1979, էջ 257:

վայրերում պահպանվել են «ասակ» հիմքով բազմաթիվ տեղանուններ: Հնարավոր է ենթադրել նաև այս դիցանվան կապը Աստվածաշնչում Հայատանին տրված «Ասրանազյան» անվան հետ. ըստ Ծննդոց գրքի (10, 3), մոռգոմն ու Ասրանազը եղայրներ էին: Սրանց կողքին անհետաքրքիր չեն նշել, որ, ըստ «Առողջ Ալիշանի թերած վկայության, հայերը հնում կոչվել են «սակեր» (հմնտ. Ակայորդի=Հայկազն, (հ)ակայր=հայր)<sup>1</sup>: Իսկ Ասազի ծննդյան պատմությունը բազմաթիվ մանրամասներով բնագրային նմանություններ ու համապատասխանություններ ունի Վահագնի ծննդյան հիմնի հետ (համադրումը՝ Արմեն Պետրոսյանի): Կորի հետ կարող է առնչվել Հայկական լոռնաշխարհում Վահնի թագավորության և ավելի վաղ ժամանակաշրջաններում մեծ տարածում ստացած հնդկուսական Կուտեռա աստծո պաշտամունքը<sup>2</sup> (թեպիս այդ մասին հրատարակված աշխատանքներ չկան, նման կարծիքի են մեր գիտնականներից շատերը): Կուտեռան Կուտա անվամբ հիշվում է Զենոր Գլակի և Հովհան Մամիկոնյանի կողմից՝ որպես Վահագն-Գյասանեի և Աստիկ-Անահիտ-Դեմետրի ավագ որդին<sup>3</sup>: Թերևս կարելի է շարունակել թեմային վերաբերող նկատառումների շարքը (որոնց մի մասը կարող է և մերժվել հետագայում), սակայն ասվածը բավարար համարելով՝ անցնենք համաշխարհային ջրիեղեղի մասին ավանդապատումներին:

### «ԵՐՈ ՋՐՀԵՂԵՂԸ ՍՐԲԵՑ ԱՍԵՆ ԲԱՆ»...

Աշխարհակործան ջրիեղեղի մասին բազմաթիվ հիշատակումներ են պահպանվել տարրեր մայրցամաքներում ասպրոյ ժողովորումների ավանդագրույցներում<sup>4</sup>: Դրանց մեջ առանձնանում են մի խումբ պատմություններ, որոնք սյուժետային մանրամասներով առավել մոտ ու կապված լինելով՝ զրի են առնվել իհն Առաջավոր Ասիայում:

Սեծ ջրիեղեղի մասին զրի առնված հնագույն պատմությունը շումերականն է, որը գիտական աշխարհին հայտնի դարձավ 1914 թվականին<sup>5</sup>: Մինչ այդ՝ 1872 թվականին, Զ. Մմիքը հրատարակել էր ջրիեղեղի մասին բարելոնյան (արայական) պատումը՝ «Գյլզամեշ» Էպոսի 11-րդ պինակիւրով<sup>6</sup>, որն իր մանրամասներով զրեթե նոյնանում է Աստվածաշնչի պատմության հետ: Երկու պատմությունների համաձայն էլ մարդկանց սրբապղծությունը սպառում է աստվածային համբերությունը, ինչի արդյունքում մարդկությունը դատապարտվում է կործանման՝ ջրիեղեղով: Սակայն

<sup>1</sup>Ալիշան, 1904, էջ 55-57:

<sup>2</sup>Կուտեռ-Կուտաի պաշտամունքի մասին տե՛ս Հմայալյան, 1990, էջ 152-166:

<sup>3</sup>Իցանունների համարժեքության վերականգնումը տե՛ս Խալաբյան, 1893, էջ 20-27, 54-60; հմնտ. Հմայալյան, 1990, էջ 154-160:

<sup>4</sup>Դրանց մեծագոյն մասը տե՛ս Փրեզեր, 1985, էջ 63-159:

<sup>5</sup>ANET, p. 42-44; Կրամք, 1965, c. 175-180; ETCSL, 1.7.4.

<sup>6</sup>ՀԱՄՊ, էջ 155-165; ՊՈ/ԼԲ, էջ 211-220; ANET, p. 88-89; MM, էջ 109-120.

աստվածային ամենատես ու արդարադատ աշքից չեն խոսափում մի քանի բարեպահտներ, ոյտն Փրկվում են տապանով՝ հանգըլաներով լեռան կամ լեռների վրա: Զիեեղեղի ավարտը Փրկվածներն իմանում են տապանից բացառութեա արծակելու միջոցով:

Աստվածաշնչում փրկության վայրը Արարատի լեռներն են (Ծննդոց, 8, 1-4), իսկ «Գիլգամեշ» էպոսում՝ Նիխուշ (այլ ընթերցմանը՝ Նիխիր)<sup>3</sup> լեռը Հայկական լեռնաշխարհի հարավում։ Որ միջազգետքյան և նրանից ծագող ավանդություններում Հայաստանն է հանդես գալիս որպես փրկիչ տարածք, ակնհայտ է նաև Բերսոսի (որի մասին խոսվել է «Աստվածների մոտ՝ Հայաստան» բաժնում)։ Ալեքսանդր Բագրայքի, Արյուղնենսախ<sup>4</sup> Հիերոնիմոս Եզիլատացու, Սնասեասի, Նիկորայոս Դամասկոսցու, Հովսեպոս Փլավլոսի, Եվսեբեոս Կեսարացու և այլոց հաղորդումներից<sup>5</sup>։ Ուշագրավ է, որ զորանայան ջրհեղեղի պատմությունը ևս (նոյնպես առաջադիր կամ առաջական ծագում ունեցող) Հայաստանի հարավը Զույհի լեռն է համարում փրկության վայրը։ «Եվ ջուրը նվազեց, կատարվեց Աստծո դատաստանը, և այն (տապանը - Ա.Ա.) կանգ առավ Զույհի լեռան վրա» («Խորան», 11, 47)։ Նոյն շրջանում է հանգրվանում տապանը նաև Խորենացու Վկայակոչած Ոլիմպումբրս Փիլիսոփայի իրն անզլր զայլցներում<sup>6</sup>։ Իսկ ասորեստանյան սեպագիր աղբյուրներում Կորրիվաց լեռների տարածքում հիշատակվում է Արարտու լեռը<sup>7</sup>։

Զրիելելի ճասին շումերական բնագրում, թերևս վնասվելու պատճառվ, բացակայում է փրկարար տարածքի անունը: Բարեպահտաբար, այդ բացրուումը հնարավոր է, լրացնել շումերական նեկ այլ բնագրի հաղործմամբ, որում Արատուա երկիր ժողովուին արվում է հետևյալ բնորոշում:

Նրանք, որ կանգնեցին ջրհեղեղի մեջ,

<sup>1</sup>Ավանդաբար ընդունված է տեղանկան Նիսիր (Նիշիր) ընթերցումը, սակայն ելեւով որոշ փաստերի առկայությունից՝ առաջարկվել է ավելի ճաշխնտրելի համարվող Նիմուշ ընթերցում (Lambert, 1986, p. 185-186):

Ալեքսանդր Բագմանիկի և Աբյուղենովի հատկածները (որոնց սկզբնաղյուրը թերոսուն է) մեզ են հասել Եվսեբոս Կեսարացու երկի միջոցով. Ալեքսանդր Բագմանիկ՝ «... և եթե տեղին՝ յորում վայրի եւեալ կային. Հայոց աշխարհն է»; Աբյուղենու «... և նաև երբեալյաշխարհն Հայոց դպրաքեր. և, ի փայտից դեռ օգնականութեան բնակչաց աշխարհին պարզեեր» (տե՛ս Ետերի Պամիիլեայ Կեսարացոյ, 1818, էջ 18 և 25): Հիերոնիմոս Եփիպտացու («որը գրել է Փյունիկիայի հնախոսությունը»), Մատեասի տեղեկորյունների մասին մեզ հաղորդում է Հովսեպոս Փալավիսը, որը մեջքերում է նաև մի հատկած Նիկողայոս Դամակղուցու երկից (Հովսեպոս Փալավիս, Հրեական հնախոսություն, էջ 54-55): Ն. Դամակղուածու հասորոնցւնից Խանոսոսաւանու Համենած Բ-ում:

**Եվսեբոս Կեսարացու, Հիերոնիմոսի, Եվստատիոս Անտիոքցու, Հովհան Ռուբերանի, Թեոդորեսոսի, Խոյդոր Սևլիպացու, Եպիփանի Ենկարանական Երկերի համապատասխան հաստիածները՝ հովանուելով՝ տես Խօսկիեան, 1947, էջ 9-21:**

<sup>4</sup>Մովսիսի Խորենացու, 1913, էջ 25-26; Մովսես Խորենացի, 1981, էջ 105-106:

<sup>5</sup>Հշատակվում է Աշորենսիքապալ Ռ-ի կողմից (նաև Արարադի, Արքեղի տարբերակներով), տես Դյակոնով, 1951, N 2, с. 285, 289, прим. 12:

այն ժամանակ, երբ ջրիեղեղը սրբեց ամեն բան<sup>1</sup>...

Արատուան Հայկական լեռնաշխարիի մինչ օրս հայտնի առաջին պետրոյթն է: (վկայված Ք.ա. 28-րդ դարից), որը թե՛ անվանք, թե՛ տեղագրութեն և թե ջրիեղեղի հետ կապված ափանուրյամբ զուգադրելի ու նոյնական է Աստվածաշնչի Արարատի հետ: Արատուա-Արարատը փրկիչ երկիր է հանդիսանում ինչպես շումերական, այնպես էլ աստվածաշնչյան աշխարհընկալումներում: Ընդ որում, Աստվածաշնչի համաձայն՝ Արարատի լեռներում կնքվեց Աստծո և մարդկուրյան հավիտենական ուխտը, որի խորիոյանշանը դարձավ ծիածանը (Ծննդոց, 9, 12-13)...

Գալով փրկարար տապանի հանգըվանատեղին՝ նշենք, որ թե ինն հեղինակները և թե սերնեխերունի փոխանցված ափանդագրույցները մատնանշում են իշխան երկու շրջան՝ Հայաստանի հարավը (Կորդվաց լեռներ) և լեռնաշխարիի կենտրոնում գտնվող Մեծ Մասիս-Արարատը: Սկզբնադրյալների մի խումբ էլ պարզապես նշում է, որ փրկուրյան նավն իցել է Հայաստանի լեռներում առանց որոշակիացնելու տեղը: Երեք դեպքում էլ վկայում է հանգույն առաջապրասիական հոգևոր թնկալումներում Հայաստանի հանդես գալն իրեն մարդկուրյան վերածննիլ երկիր, նոր մարդկուրյան հայրենիք: Ջրիեղեղից հետո մարդկուրյան վերապրումը յուրօինակ մի նոր արարչագործուրյուն էր, և ոչ պատահականորեն այն տեղի է տնենում մարդկուրյան արարուն վայրում՝ Հայկական լեռնաշխարհում: Պատահական չեն նաև, որ հետում մի շարք ժողովուրյուների լիցա-վիպական պատկերացումներում առաջին մարդու ծննդավայրն ու ջրիեղեղից փրկվելու տեղը համարվել են երկրի պրոտը, որը գտնվում էր աշխարիի առանցքը, որը և աշխարիի կենտրոնն էր<sup>2</sup>: Հենց այլպիսի ծևակերպմանը է պահպանվել ջրիեղեղի պատմուրյունը Թուվմա Արձրունու մոտ: «Աստվածային իրամանը կատարվելուց հետո ալեծով ջրերը տապանը թերեցին արևելք աշխարիի կենտրոն, և այն նատես Կորդվաց լեռներին: Եվ նահապետը գոհորյան զուել մատուցեց Աստծոն, որի խոստացավ այլս նոյնը շնուրով աշխարիին, և ավիտենական ուխտ հաստատեց: «Իմ աղեղը պետք է դնեմ ամսպի մեջ», որը ծիածանն է, որ ունանք համարում են ամսպից զատված հուր, իսկ կրապաշտների որդիները՝ Արամագոլի գոտին»<sup>3</sup>...

Աշխարհակրծան ջրիեղեղի մասին ավանդագրույցներ են զյուրյուն ունեցել նաև նախարքիսունեական Հայաստանում: Մի գրույցի համաձայն՝ հայոց Արամագդ և քաղենացոց Թրուծան աստվածների միջև քշնամուրյուն կար, և Արամագդը հայրեղով՝ ջրախեղոյ արեց Թրուծանին<sup>4</sup> (սա, թերևս, Հայաստան-Միջազգեստ հանգույն հարաբերուրյունների արտացոլումն է լիցաբանուրյան լեզվով): Մեկ այլ պատումի համաձայն՝ Ծիր Կարինը երկնքի պատուվածքն է, որից բափվել է ջրիեղեղը երկրի վրա և բո-

<sup>1</sup>Kramer, 1952, p. 42-43; Cohen, 1964, c. 218; Cohen, 1973, p. 140.

<sup>2</sup>Տոռոս Բ.Ն., Պոլ զեմլի, ՄՀՄ, թ. 2, 1992, ս. 350.

<sup>3</sup>Թուվմա Արձրունի և Ամանուն, 1985, էջ 32-33:

<sup>4</sup>Ալիշան, 1904, էջ 44:

դել իր հետքը երկնքում՝ ի տես մարդկանց<sup>1</sup>: Հայկական ավանդությունը յուրօրինակ մի փառաքանություն-օրիներգ է Մեծ Մասիսին. փրկարար տապանին հայոց լեռները խորհուրդ են տալիս զնալ դեպի մայր լեռը, որ մեծ ու բարձր է բոլորից<sup>2</sup>:

Քրիստոնեության ընդունումից հետո հայկական ավանդագրույցները (որոնց մի մասը մոռացվեց) միաձուլվեցին աստվածաշնչյան պատմության հետ, և ձևափորվեց մի նոր ավանդագրեպ, որը դեռևս կարիք ունի համակողմանի ուսումնասիրության (տես նաև Հավելված Բ-ում):

### ԱՆՍԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՀԱՅՈՅ ԵՐԿՐԻ ճԱՆԱՊԱՐՀԸ

Աստվածաշնչի հայտնի պատմության համաձայն՝ Աստված Եղեմի կենտրոնում տնկեց կենաց, բարու և շարի իմացության ու բազմաթիվ մըրգասոր ծառեր՝ պատվիրելով ուսել միայն մրգատու ծառերի պատուները: Օձի միջանոության շնորհիվ առաջնաստեղծ մարդիկ ճաշակեցին բարու և շարի իմացության ծառի արգելված պլոտով, բացվեցին նրանց աշքերն, ու աստվածների նման նրանք ճանաչեցին բարին ու շարը: Եվ գրուշանարով, որ մարդիկ կճաշակեն նաև կենաց ծառի պլոտով, կանմահանան ու կաստվածանան, Աստված Վտարեց մարդկանց դրախտից և դեպի կենաց ծառը տանող ճանապարհներին պահապան դրեց քերովեներին ու բոցեղեն սուրը (Ծննդոց, 2, 8-3, 24):

Աստվածաշնչյան ընկալմամբ՝ աստվածայինի ու կենդանականի միջև կա երկու խոչոր անջրպես՝ իմաստությունն ու անմահությունը: Երկու աստվածային հատկանիշները խորիրդանշող սրբազն ծառերն աճում էին դրախտում (որն արարչագործության ու աշխարհի կենտրոնն էր), որի տեղադրությունը Հայկական լեռնաշխարհում հայտնի է վարդց: Ուստի, Հայաստանի մասին աստվածաշնչյան պատկերացումների շարքում (դրախտ, մարդկության վերածննդի երկիր, Աստծո և մարդկանց հավլսենական ուխտի երկիր) պետք է ընդգծել իմաստության ու անմահության խորհուրդներ կրելը ևս:

Արդեն նշվել է, որ Հին Կտակարանի մի շաբթ սյուժեների ու պատկերացումների ակոնքները կապվում են իին Սրբագիտքի հետ: Բացառություն չեն կազմում նաև իմաստության ու անմահության խորիրդներին առնը-փող քեմաները: Թե՛ Աստվածաշնչում և թե՛ միջազներգյան հնագույն բնագրերում մարդը հասու է լինում միայն իմաստությանը (օժտվուծ բանականությամբ), բայց մնում է մահանացու՝ միջին դիրք գրավելով աստվածա-

<sup>1</sup>Ղանանալյան, 1969, էջ 7, 420:

<sup>2</sup>Ղանանալյան, 1969, էջ 12, 24, 26, 54: Ուշագրավ է, որ այս սյուժեն տարածվելով՝ ընկել է ջրհեղեղի «կոլլացիայան տարբերակի» հիմքում, ըստ որի տապանը նախ քվել է Կագբեկ լեռան կողմը և երկու կեսի բաժանել նրա զագարը, հետո հասել Արարատ լեռանը և դադար առել նրա վրա (Ղանանալյան, 1969, էջ ԾԿԴ):

յինի ու կենդանականի միջև: Դրանով նա, սակայն, շբաղարեց անմահության ձգտելուց, և հավխռնական կյանքի որոնումը դարձավ մարդու նշտական ուղղելիքը: Հնագոյն միջազգետքյան ավանդության մեջ անմահություն որոնող զլասավոր հերոսը Գիլգամեշն է, որի մասին ասքերը գրի են առնվել իյն աշխարհի բազմաթիվ լեզուներով: Շումերական «Գիլգամեշն ու անմահության երկիր» վիպերգում Գիլգամեշը որոշում է ուղևորվել անմահության երկիր, որին հասնելու համար Ուրու (Արև) աստվածը նրան տալիս է «դեպի Արատտա ճանապարհը ցույց տվող» յոթ ուղեցույցներ<sup>1</sup>: «Գիլգամեշ» էպոսի խեթական տարրերակում հերոսն ընկերոջ հետ մեկնում է անմահության որոնման Եփրատի հոսանքն ի վեր<sup>2</sup>: Խսկ էպոսի բարելոնյան տարրերակում Գիլգամեշը հաղթահարում է Մաշու լեռներն ու տասներկու ասպարեզ ձգվող բանձր խավարք, հասնում դրախտ հիշեցնող բարերի այօլն, ապա անցնում ճահիվան ջրերը, հանդիպում ջրիներից փրկված ու անմահություն ստացած հերոսին, նրա շնորհիվ ծեռոք է բերում «անմահության ճաղիկը», որը վերադարձի ճանապարհին նրանից գողանում է օճը<sup>3</sup>: Ուշագրավ է, որ Աստվածաշնչում ևս մարդկությունը մահկանացու է դառնում օճի միջանուրյան հետևանքով:

Գիլգամեշի հետ կապված անմահության մասին պատկերացումները Առաջավոր Ասիայում պահպանվում են բավականին երկար, անմահության որոնման սյուժեում Գիլգամեշին փոխարինում է Ալեքսանդր Մակեդոնցին: Անմահության հասնելու համար Ալեքսանդր Սեծն, ըստ հունական վեպի (գրի առնվագ Ք.ա. 240ր.), բռնում է «ճանապարհը դեպի Հայոց երկիր, որտեղ ակունքն է Եփրատի ո Տիգրիսի»<sup>4</sup>: Նա հասնում է իրաշք-երկիր, ապա անցնում մոտք աշխարհով, հանդիպում օրինյալ մելիքն և հասնում կենաց աղբյուրին: Խսկ Ալեքսանդրի մասին սիրիական վեպում նրա ճանապարհին հիշվում է Մասիս լեռնաշղթան<sup>5</sup>: Փաստորեն իյն արևելյան և հելլենիստական վիպական ավանդություններում «դեպի Արատտա ճանապարհը» փոխարինվում է «դեպի Հայոց երկիր ճանապարհով», Մաշու լեռները՝ Մասիս լեռնաշղթայով, երկու դեպքում էլ հերոսը զնում է դեպի Եփրատի (ու Տիգրիսի) ակունքները, անցնում խավարով, դրախտ հիշեցնող վայրով, ապա մոտք աշխարհով կամ մահիվան ջրերով, հանդիպում աստվածքներյալ հերոսին և ստանում անմահություն: Իրականում երբեւ Հայաստան շմտած Ալեքսանդր Մակեդոնացին վիպական ավանդության մեջ բռնում է նրա ճանապարհը<sup>6</sup>, քանի որ իյն առաջավորապիտական

<sup>1</sup>ՊՊԼԲ, ս. 131; հայերեն բարգմանուրյունը՝ «Գարուն», 1994, Ն 4, էջ 90:

<sup>2</sup>MM, թ. 127, note 32.

<sup>3</sup>ՀԱՊ, էջ 163-165; ՊՊԼԲ, ս. 218-220; ANET, թ. 88-89; MM, թ. 119.

<sup>4</sup>Lipinski, 1971, թ. 46:

<sup>5</sup>Lehmann-Haupt, 1927, ս. 797-798; Lipinski, 1971, թ. 47; Tysaev, 1924, ս. 262-263;

<sup>6</sup>Խնկլիկեան, 1947, էջ 120:

«Նշենք, որ հայկական ավանդագրույցներում պահպանվել են և Մակեդոնացու Հայաստան գալու, և «մոտք աշխարհով» «ըստ աշխարհ» հասնելու, «անմահական զուր» ծեռոք բերելու սյուժեները (Ղանանայան, 1969, էջ 279-282, 472):

իոգևոր ընկալումներում մեր երկրի հետ էին կապված դրախտայինին և անմահությանը վերաբերող պատկերացումները<sup>1</sup>:

Նախորդ էջերում անդրադարձել ենք դրախտի՝ լստ իին առաջավիրախական մի շարք աղբյուրների՝ Հայկական լեռնաշխարհում տեղորոշվելուն: Նշվել է նաև, որ հայկական աղբյուրների համաձայն՝ դրախտը գտնվել է Բյուրակնի լեռների, Բարձր Հայրի ո հարակից շրջաններում: Այդ տարածքի հետ են կապվում անմահության մասին բազմաթիվ հայկական ավանդագրույցներ. որոնց համաձայն Բյուրակնում էր աճում անմահության ծաղիկը (խոտը) և ըստում անմահության աղբյուրի: «Իրանը կենդանացնում էին մեռյալին, բուժում անհույս իիվանդին, վերադարձնում կոյրի տեսդրությունը<sup>2</sup>: Հատկանշական է, որ հայկական հնագույն պատկերացումներում դրախտ-անդրաշխարի տեղայնացումը նույնն է, ինչ առաջավորախական վերոհիշյալ զբոյցներում: Անմահության երկիր-դրախտը գտնվում էր անդրաշխարից հյուսիս, և հարավից եկող անմահություն որոնող հերոսը նախ պետք է անցներ անդրաշխարինվ: Վերջինս, լստ հայոց վաղնջական հավատալիքների, գտնվել է Հայկական Տավրոսի լեռնազանգվածում, Անգեղ տուն զավառի տարածքում: Միջազետքյան աղբյուրներում իրք անդրաշխարի հանդես եկող Կորը և տեղայնացվում է Հայկական Տավրոտում Տիգրիսի ակունքների շրջանում: Գիլգամեշը նախ անցնում է Մաշու (Մասի(ո)ս-Մասին) լեռները, որոնք ծգվում են Հայկական Տավրոսի հարավով, հաղթահարում խավար տարածությունը, դուրս զայխ հերխարային քարերի այգին, ապա անցնում մահվան ջրերով և հասնում նապատակակետին<sup>3</sup>: Մաշու լեռներից հետո տասներկու ասպարեզ տարածվող խավարը, ինչպես ցոյց է տվել Կ.Ֆ.Լեհման-Հաուպտը դեռևս տասնամյակներ առաջ, Տիգրիսի բնական բունենքն է, որի ելքի մոտ գտնված ասորեստանյան սեպագիր արձանագրություններում նշվում է այդ տարածքի՝ Տիգրիսի ակունքն ու «արքի ելքի և արևամուտի հզոր լեռները» լինելը<sup>4</sup>: Քարերի այգու պատկերը հիշեցնում է Աստվածաշնչի Եզեկիլի մարզաքառորդյան (28, 13-14) դրախտի նկարագրությունը: Իսկ մահվան ջրերի ու նույն աշխարի տարածքը նույնանում է հայոց անդրաշխարի: Անգեղ տան հետ: Այն հաղթահարելուց հետո միայն հարավից եկողը

<sup>1</sup>Հունական աղբյուրներում հիշվող Այա երկիրը, որտեղ իշխում էր արքի որդին և պահպատ Ռուկե Գեղմը, մեծ հավանականությամբ, նոյնացվում է Հայասա-Հայրի հետ (Զահուլյան, 1987, էջ 285; Պետրոսյան, 1997, էջ 86-89; Մարտիրոսյան, 1997, էջ 24): Այս երկրի Ռուկե Գեղմը կապվում է խերական աղբյուրներից հայտնի մշտադարձը ևս ծափի հետ, որից կախված ոչխարի գեղմը խորհրդանշում էր բոլոր բարիքները (ԸՒՀ, էջ 61):

<sup>2</sup>Հանանայան, 1969, էջ 21-22, 422: Նախաքրիստոնեական հայ իրականության մեջ կենաց ծափի և անմահության ծաղկի պաշտամունքի մասին կարող են վկայել մինչև 19-րդ դարի վերջերը պահպանված արևորդիների համայնքները, որոնք երկրպագում էին արքեր, բարդին ու շուշան ծաղկիը (Եարտիք, 1967, էջ 102-112):

<sup>3</sup>ՀԱՊ, էջ 143-165; ՊՈ/ԼԲ, էջ 200-220; ANET, էջ 88-97; MM, էջ 96-120.

<sup>4</sup>Lehmann-Haupt, 1910, S. 430-462.

կարող էր հասնել հայոց դրախտաշխարի՝ Բարձր Հայր և Բյուրակն:

Այսպիսով, թե՛ սյուժետային մանրանասների և թե՛ աշխարհագրական տեղայնացումների բննորյունը ցոյց է տալիս, որ հնագույն ժամանակներում Առաջավոր Ասիայում ստեղծվել և հելլենիզմի դարաշրջանում գոյություն է ունեցել անմահության մասին պատկերացումների մի համակարգ, որի համաձայն՝ հավիտենական կյանքի խրհրդող պահպում էր Հայկական լեռնաշխարհում, ուստի և անմահություն տենչացող հերոսին վիճակված էր անցնելու ճանապարհը դեպի Արատտա՝ Հայոց երկիր...

## ԵՐԿԻՐՆ ԻՍԱՍՏՈՒԹՅԱՆ

Միջագետքյան հնագույն բնագրերի ու Աստվածաշնչի գաղափարապյութեային առնչակցությունն ակնհայտ է նաև նախասկզբնական իմաստության թեմատիկայում: Ինչպես նշվեց, բարու և շարի իմացության ծառն, ըստ Հին Կոտակարանի, գտնվել է Եղենում Հայկական լեռնաշխարհում, որը և առաջին մարդիկ հասու են դարձել իմաստությանը (Ծննդոց, 3, 1-7): Այդ առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի շումերական բնագրերից մեկի հաղորդումը, որն իմաստության ու արվեստի ծագումը կապում է Հայկական լեռնաշխարհի հետ. «Իմաստությունն ու արվեստը ցած թերմեց Արատտայից»<sup>1</sup>:

Հին միջազգետքյան դիցաբանությունը Հայոց լեռնաշխարհի հետ է կապում աստվածներից իմաստագույնի՝ արարչագործ, իմաստության, համաշխարհային օվկիանոսի ու ստորերկրյա ջրերի աստված Հայա-Ենիկի պաշտամունքը: Նրա գլխավոր կացարանը գտնվում էր Արգուստ, որի վերերկրյա ջրանների՝ Հայկական լեռնաշխարհում գտնված լինելու մասին խոսվել է «Արարշագործության կենտրոնը» քաֆում: Միջագետքյան հավատալիքների համաձայն՝ Արգուստ էին բնակվում յոթ իմաստունները, ուրնց Հայա-Ենիկն ուղարկեց քաղաքակրթություն տարածելու մարդկանց մեջ: Նրանցից հատկապես հայտնի է Օաննեսի պատմությունը (Հնորիկի Բերտոսի գրառման), որը մինչ այդ կենդանիների նման ապրու Բարելոնի ժողովրդին սովորեցրեց գիր, գիտություններ, շինարվեստ, երկարգործություն և այլն<sup>2</sup>: Ծումերական աղբյուրներում իրքն քաղաքակրթության բնօրրան է հանդես գալիս նաև Հարավի երկիրը (տես «Ուսկերեր երկիրը Հարավի» քաֆում):

Ի մի թերեկով ասվածը՝ տեսնում ենք, որ արարշագործության կենտրոն, մարդկության ծննդի ու վերապրումի փայր, դրախտ ու անդաշխարհ հանդիսացած և անմահություն շնորհող մեր լեռնաշխարհն, ըստ միջագետքյան պատկերացումների, եղել է նաև քաղաքակրթության բնօրրանը...

<sup>1</sup>Alster B., Studies in Sumerian Proverbs, 1975, p. 128, n. 32(ըստ Berlin, 1983, p. 22):

<sup>2</sup>MM, p. 182-183; Schnabel, 1923, S. 253-256; B.K.Աֆանասյան, Օանոս, МНМ, т. 2, с. 234.

## ԹԱՐԵՊԱԾՏ ԸՆՏՐՅԱԱՆԵՐԸ ՍՈՒՐԲ ՕՐԻՆԱՑ ԵՐԿՐՈՒՄ ՀԱՅԱ ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆԵՐԸ

Շոմերական դյուցազնավեպում Արատտան հանդես է գալիս «աստվածային սուրբ օրինաց երկիր» պատվանուն-մակրիբով<sup>1</sup>: «Աստվածային սուրբ օրենքներ» (շոմերերեն՝ «մե») ասվածի տակ հասկացվում էին ոչ թե պարզապես օրենքները, այլ այն մեծազոր սրբազն ուժերը, որոնք կատավարում էին ողջ տիեզերը, աստվածային ու ճարդկային իրականության բոլոր ոլորտները: Այդ իսկ պատճառով առաջարկվում է շոմերերեն «մե» բառը բարգմանել «Եռյուն, լինելուրյուն»<sup>2</sup>: «Աստվածային սուրբ օրենքների» տիրակալն, ըստ շոմերա-արադական դիցաբանության, Հայան (Էնկին) էր՝ աստվածներից իմաստնազոյնը, որի պաշտամունքն, ինչպես նշվել է, կապվում էր Հայկական լեռնաշխարիի հետ:

Միջազգետրյան զրականության հալորդումների համաձայն՝ սրբազն մեր լեռնաշխարհում, ուր տեղի էին ունեցել աշխարհարարման զիխավոր իրադարձությունները և պահիվ էին տիեզերիք կատավարու սուրբ օրենքները, անմահության ու իմաստության խորհրդական բնակլում էին ոչ թե սովորական մահկանացուներ, այլ՝ ընտրյալ ժողովուրդ: Այդ մասին վկայություն է պահպանել շոմերական դյուցազնավեպը.

Ժողովուրդն (Արատտայի), որ առավել է ճյուս ժողովուրդներից,  
ժողովուրդը, որին Դումովին ընտրեց ճյուս ժողովուրդներից...<sup>3</sup>

Սա «ընտրյալ ժողովուրդ» հասկացության բացառիկ մի կիրառություն է, ոչ միայն ժամանակի վաղեմության առումով, այլ հատկապես նրանով, որ «ընտրյալ» է համարում ոչ թե ժողովուրդն ինքն իրեն (ինչպես իրենքներն ու ճապոնացիները), այլ՝ օտարը նրան, ընդ որում, հակառակորդ լինելով: Իսկ դա նշանակում է, որ մեր նախնիների աստվածընտրյալ լինելու մասին պատկերացումը գոյություն է ունեցել և ճանաչվել նաև Հայկական լեռնաշխարիի սահմաններից դրւու:

Նոյն սկզբնաղբյուրը տեղեկություն է պահպանել աստվածընտրյալ մեր նախնիների՝ սեփական ճանապարհի գիտակցություն՝ առաքելություն ունենալու մասին, որը վկայվում է Արատտայի տիրակալի խոսքում.

Եթե պսակն Արատտայի՝  
Բարեգործ լամամ<sup>4</sup> սուրբ օրինաց երկրի,

<sup>1</sup>Շոմերերեն kur-me-sikil-la արտահայտությունը բարգմանվել է տարբեր կերպ (տե՛ս օրինակ Kramer, 1952, p. 21; Կառեա, 1964, c. 208, 210; Cohen, 1973, p. 123; Berlin, 1979, p. 57 և այլն): Քանի որ «մե» էին կոչվում աստվածային օրենքները, մենք նախընտրում ենք «աստվածային սուրբ օրինաց երկիր» բարգմանությունը:

<sup>2</sup>Վ.Կ.Աֆանասյեա, Me, MHM, թ. 2, 1992, c.127.

<sup>3</sup>Kramer, 1952, p. 43; Կառեա, 1964, c. 218; Cohen, 1973, p. 140 (բարգմանություններում կամ ոչ էական տարբերություններ. մենք հետևել ենք վերջին երկուսին):

<sup>4</sup>«Լամա» է կոչվել հովանավոր աստվածությունն ընդհանրապես: Այս բնագրի մեկ այլ հատվածում (տող 221-225) նշվում է, որ Արատտայի տիրակալը նշանակված է իշխելու «տիեզերքի տիրուհու» ինաննայի «սուրբ ծեղբով», ուստի հնարավոր է.

Երկնային լուսե պսակի նման որոշեց ճանապարհն Արատտայի.

Այնուամ ես իմ մեծության մասին հաստատ իմացա...<sup>1</sup>

Հին առաջավորասիական բնագրերը պահպանել են լեռնաշխարիի հետ կապված և «հայա» իմբրով ցեղանվան ու տեղանունների բազմաթիվ հիշատակորյուններ: Մասնավորապես «հայա» ցեղանուն և տեղանուն են բազմից և իշխում Երայի (Սիրիայի հյուսիսում, Ք.ա. 24-23-րդ դդ.) բնագրերում, ընդունակ նաև Արմի ու Ազի հայատանյան քաղաքների հետ<sup>2</sup>: Միջագետքյան բնագրերում Սուրբու (Սուրայի) երկրանվանը համարժեք հսնդեմ եկաղ տեղանունը «Հայա Երիքին (քաղաքը)» է<sup>3</sup>: «Հայա» ցեղանունը հիշվում է Ք.ա. 3-2-րդ հազարամյակների սահմանագծով բնագրի Աշուրից գտնված մի բնագրում<sup>4</sup>: Խսկ խերական արձանագրություններում Ք.ա. 15-13-րդ դդ. իշխատակվում է Հայասա Երկրանունը, որի -(ա)սա վերջավորությունը խերական տեղանվանակերտ մասնիկ է<sup>5</sup>: Համակարգի մեջ դիտելիս՝ ակնհայտ է մեր լեռնաշխարիի հետ կապվող Հայա աստծո անվան, շոմերա-արայական, երլայական, հին աշուրական և խերական աղբյուրների «հայա» ցեղանվան ու նրանով կազմված տեղանունների և հայ ժողովրդի խճնանվան ծագումնարանական ընդհանուրությունը:

Հայս աստծո կապը Հայկական լեռնաշխարիի հետ առավել բնորդվում է նրա որոյ՝ թնօրյան ու զարբոնի աստված Դոմուզիի՝ Արատտա երկրի լովանափոր աստվածը լինելով: Ուշագրաւ է, որ միջագետքյան Դոմուզիի ժամանութիւն համապատասխանում է Օրինին, որն Աստվածաշնչի հայերեն բարգմանորյան մեջ (Հոր, 9, 9) փախարինված է Հայկով<sup>6</sup>: Այսինքն՝ Այստուայի լովանափոր աստվածը եղել է Հայկը: Հայայի որդի Դոմուզիի անունը նշանակում է «հարազատ (խակական) որդի», խսկ «Հայկ» անունը կազմված է «հայ(ա)» ցեղանունից (կամ դիցանունից) և -իկ մասնիկից (իմմտ, հնդ-իկ, պարս-իկ և այլն), նշանակելով «հայ(ա)» ցեղի (կամ աստծոն) ներկայացուցիչ, որիլ: Հայա (Լենկի) աստվածը շոմերա-արայական դիցարանորյան մեջ արարչագրիցորյան զիշապոր դեմքերից է, խսկ Հայկ նահապետի մասին Մար Արա Կատինայի մատյանից քաղելով՝ Խորենացին գրում է. «Աստվածներից առաջնուններն ահեղ էին և երևելի, և աշխարիի մեծամնել բարիքների պատճառ, աշխարիի ու բազմամարդության սկիզբ: Մրանցից առաջ եկավ հսկաների սերունդը... Մրանցից մեկն էր և Հասկատության Հայկը»<sup>7</sup>...

որ «քարեզոր լաման» ևս վերաբերի իննանային (հմմտ. հետազայի հայկ. Անահիտինի), որը Դոմուզիի սիրեցյալն ու կինն էր:

<sup>1</sup>Kramer, 1952, p. 23; Կառու, 1964, c. 211-212; Cohen, 1973, p. 125.

<sup>2</sup>Ինաով, 1983, c. 31-33; Սովորայան, 1993, էջ 119-121:

<sup>3</sup>Gelb, 1944, p. 31, 94-96.

<sup>4</sup>Ինաով, 1983, c. 30-31.

<sup>5</sup>ՀՀՊ, էջ 190-194 և գրականությունը (բաժնի հետինակ՝ U.S.Երեմյան):

<sup>6</sup>Մատթեոսեան, 1993, էջ 304:

<sup>7</sup>Մովսես Խորենացի, 1981, էջ 109:

Ամեն քան կարծես իր տեղն է բնկնում, և մեր առջև քացվում է հայոց ժագումնաբանության մոռացված կարևորագույն մի էջ: Ըստ այլմ, մենք սերում ենք արարշագործ, աստվածների մեջ իմաստնագույն Հայ(ա) աստծուց, որի որդին էր դյուցազն Հայկը<sup>1</sup>: Նրա անոնք նշանակում էր Հայ(ա)ի որդի, Ենթայացուցիչ, այսինքն՝ հայ, ուստի և ինչպես Պատմահայրն է վկայում, նրա անոնով կոչվեցինք բոյրս (Հայկ=հայ, Հայկը=Հայր=Հայատան): Իսկ աստծո անոնով ժողովրդի ու երկրի անվանակոչումը հայտնի երևոյթ է իին աշխարհում (օրինակ՝ Աշուր աստծո/անոնով՝ Աշուր երկրը, մայրաբաղարը և ժողովրդը)...

## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Ավարտելով աշխատանքը, որն առաջին փորձն է՝ ի մի բերելու Հայատանի մասին Առաջավոր Ասիստում տարածված վաղնջական պատկերացումների առանձին դրվագները, մեկ անգամ ևս նշենք, որ այն չլի հավակնում սպառիչ և վերջնական լինելու, ընդգրկելու առկա ողջ նյութը: Բերված նյութն էլ, սակայն, լիովին քավարարում է ուրվագծելու իին առաջափորասիական հոգևոր ընկալումներում Հայոց երկրի և Ժողովրդի կերպարը: Դրանց համաձայն՝ մեր լեռնաշխարհի, նախրան մարդկության արարունք, ենի՛ և աստվածների բնակության վայր, այստեղ է գտնվել դրախտը, որում արարվեց մարդկությունը, այստեղ էր գտնվում կենսատու արևի կացարանը: Մեղսագործ մարդկության կործանումից հետո կրկին մեր երկիրը դարձավ մարդկության վերածննդի վայրը, որ կնքվեց Աստծո ու մարդկանց հավիտենական ուխտը: Մեր երկրում են պահեվ անմահության ու իմաստության խորհուրդները, տիեզերքը կառավարող սրբազն օրենքները: Աստվածային այդ երկրում ապրելու մենաշնորհն ունեխն բարեպաշտ մեր նախնիները, որոնք ընտրյանենք էին բնության ու զարթոնքի աստծո, որդիներն արարշագործ իմաստնագույն Հայա աստծո, որի անոնով էլ, թերևս, կոչվեց մեր ժողովուրդը...

Մեր երկրի՝ սրբազն և ժողովրդի՝ աստվածքներյալ լինելու մասին պատկերացումները շարունակեցին գոյատևել նաև քրիստոնեական շրջանում, շնայած, որ Աստվածաշնչում ընտրյալ են համարվում հրեաները:

Եղիշեն, նկատի ունենալով դրախտի տեղու վկայող երկու գետերը (Եփրատն ու Տիգրիսը) և տապանը, որպես մարդկության վերածննդի խորհրդանիշ, մեզ զերադասենիլ է համարում շատ ուրիշներից. «Երկու գետով եւ տապանան զեր ի վերոյ ենք քան զյուրփս: Եւ թէ զի՞նչ օգտտ է, նախ՝ իմաստուն սեպակի առյուրներում իիշատակվող Հայա աստվածը նոյնացվել է հայոց անվանադիր նախնի Հայկի հետ (Եսայան, 1985, էջ 84-93; Մովսիսյան, 1992, էջ 40-41; Փիլիպոսյան, Քամալյան, 1997, էջ 67-69): Դումովի-Օրիոն-Հայկ համարումը և վերոնշյալ փաստեր ստիպեցին մեզ վերանայել այդ տեսակետը և հանգել Հայկի՝ Հայայի որդին լինելու կարծիքին: Հայան իր հերթին համարվել է նախատեսավոր օվկիանոսի Նամմուի (հմնտ. հայկ. Էպոսի Ծովինարին) որդին:

<sup>1</sup>Հին արևելյան սեպակի առյուրներում իիշատակվող Հայա աստվածը նոյնացվել է հայոց անվանադիր նախնի Հայկի հետ (Եսայան, 1985, էջ 84-93; Մովսիսյան, 1992, էջ 40-41; Փիլիպոսյան, Քամալյան, 1997, էջ 67-69): Դումովի-Օրիոն-Հայկ համարումը և վերոնշյալ փաստեր ստիպեցին մեզ վերանայել այդ տեսակետը և հանգել Հայկի՝ Հայայի որդին լինելու կարծիքին: Հայան իր հերթին համարվել է նախատեսավոր օվկիանոսի Նամմուի (հմնտ. հայկ. Էպոսի Ծովինարին) որդին:

տուրեան պատճառ է մեզ, անմոռաց պահելով զԱստուծոյ արարութեան, եւ ակն ունել փոփոխմանն ի նոյն, ապա եւ՝ երիս բարեխօսս ունիմք առ Աստուծած»<sup>1</sup>...

Գրիգոր Նարեկացու «Հարության տաղում» քրիստոնեական ողջ աստվածաբանությունը խորհրդանշող սայլի ճանապարհը դեպի Երրուսաղեմ սկսվում է Մեծ Սասիսից. «Սայն այն իշաներ ի լեռնեն ի Մասեաց ... եւ ճոնչալով զայր մտաներ յԵրրուսաղեմ»<sup>2</sup>...

Հովհաննես Ինաստասերը, նշելով հայերի և իրեաների աստվածքնորյալ լինելը, ընդգծում է հայերի առաջնորյունը իրեաների նկատմամբ. «Արդ՝ զշարժումն ամսոց երրայեցոց եւ զանշարժութիւն հայ ամսոցդ սահմանեաց Բարձրեալն, զի հաւատ, եւ զիր եւ տումար այս երկու ազգիս միայն եւ Աստուծած, եւ այլոց ազգացդ՝ մարդկան են արարեալ. զիրս հայոց՝ աստ ի վերայ վիմի իրեղեն աջով, անդ՝ ի տախտակս բարեղենս, զոտվնարս՝ անդ Մովսէս, աստ՝ Հայկն, յառաջ քան զնա, զիավատս՝ անդ ի լեռնէ՝ ի վայր պատգամաւ, աստ՝ ի վերայ վիմի ոսկի ուռամբ ինքն Աստուծած»<sup>3</sup>...

